ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Նոր աշխարհակարգի ձևավորման ազդեցությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վրա. Ինքնորոշո՞ւմ, թե՞ ցեղասպանություն

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Բրյուսովի անվան պետական համալսարան

Աշխարհաքաղաքական տրանսֆորմացիաները արմատական ազդեցություններ են ունենում հասարակական կյանքի շատ ոլորտներում, սակայն դրա առավել ցայտուն դրսևորումները նկատվում են էթնոքաղաքական հակամարտությունների ու դրանց կարգավորման գործընթացների վրա: Հատկապես, երբ դրանք համադրվում են տարածաշրջանային լուրջ վերափոխումների հետ: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ու դրա կարգավորման գործընթացն այդ տեսակետից առավել բնորոշ դեպքերից են: Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների շրջանակներում այդ հակամարտության կարգավորման բնականոն զարգացող գործընթացը Հայաստանում 2018թ. տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում հայտնվեց կտրուկ ցնցումների մեջ՝ ենթարկվելով ծայր աստիճան թեժացած Արևմուտք-Ռուսաստան աշխարհաքաղաքական դիմակայության վայրիվերումների տրամաբանությանը: Մինսկի խմբի համանախագահների անտագոնիստական հարաբերությունների ձևավորումը խափանեց նրանց միջնորդական առաքելությունը, ինչը, 2020թ. ադրբեջանաթուրքական ագրեսիայի հետևանքների, Ադրբեջանի չդադարող ագրեսիվ գործողությունների, ինչպես նաև Թուրքիայի սադրիչ պահվածքի պայմաններում հակամարտության հանգուցալուծման համար թողնում է երկու ելք՝ ինքնորոշման իրավունքի իրացում միջազգային հանրության աջակցությամբ կամ Լեռնային Ղարաբաղի բնակչության ցեղասպանություն:

Բանալի բառեր
Լեռնային Ղարաբաղ, ինքնորոշում, միջազգային իրավունք, աշխարհաքաղաքականություն, ցեղասպանություն

Նախաբան

Նոր աշխարհակարգի հաստատման համար մղվող ռուս-ամերիկյան կոշտ պայքարի ավելի ու ավելի խորացող դիմակայության համադրումը աննախադեպ տարածաշրջանային գործընթացների հետ հանգեցնում է միանգամայն նոր իրավիճակների ու մարտահրավերների, որոնք պահանջում են հին խնդիրների նոր լուծումներ: Դրա առավել ցայտուն դրսևորումներից են Լեռնային Ղարաբաղի հակամարտության գործընթացի կտրուկ վայրիվերումները վերջին տարիներին: 2018թ. տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում Հայաստանում ձևավորված իշխանության արտառոց մոտեցումներն[1] ու այդ առիթով իրականացված և աղետալի հետևանքների հանգեցրած 2020թ. ադրբեջանաթուրքական ագրեսիան[2] կտրուկ փոխեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ընթացքը՝ էապես թուլացնելով միջազգային իրավունքի տեսակետից անթերի լուծման իրականացման հնարավորությունները: Փաստորեն չի գործում ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի համանախագահները գրեթե երեք տասնամյակ՝ մինչև 2021թ. ապրիլ, միասնական դիրքորոշումներով փորձում էին այդ հիմնախնդրի համար լուծում գտնել՝ միջազգային

[1] Թորոսյան Տ., ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները, https://www.luys.am/img/artpic/small/719d9a46a82fdcab7573ԼՂԳործընթաց.pdf
[2] Assessing U.S. Policy in the Caucasus, Senate of USA, November 16th, 2022, November 16th, 2022, https://www.foreign.senate.gov/hearings/assessing-us-policy-in-the-caucasus; Sénat, Résolution portant sur la nécessité de reconnaître la République du Haut-Karabagh, 26 (2020-2021), 25 novembre 2020, http://www.senat.fr/leg/tas20-026.pdf ; REPORT on the implementation of the Common Foreign and Security Policy – annual report 2020 (2020\2206(INI), https:\www.europarl.europa.eu\doceo\document\TA-9-2021-0013_EN.pdf

իրավունքի սկզբունքների հիման վրա։ 2022թ. փետրվարին Ուկրաինայում լայնածավալ պատերազմի վերածված ԱՄՆ-Ռուսաստան աշխարհաքաղաքական կոշտ դիմակայությունը ոչ միայն խաթարեց այդ միասնականությունը, այլև Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում համանախագահող երկրները հայտնվեցին հակառակ դիրքերում և նրանցից յուրաքանչյուրը փորձում է առաջ մղել կարգավորման իր՝ բրյուսելյան (ֆրանսիական), վաշինգտոնյան կամ ռուսական տարբերակը, չունենալով հակամարտությունների կարգավորման լիազորություն ունեցող միջազգային կազմակերպություններից որևէ մեկի՝ ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի մանդատը։ Ընդ որում, այդ տարբերակներից ոչ մեկը հեռավոր աղերս անգամ չունի ոչ միայն մինչև 2019թ. բանակցային սեղանին եղած նախագծի, այլև միջազգային իրավունքի նորմերի հետ, որոնք 13 տարի՝ 2007 թվականից մինչև 2019թ., եղել են բանակցային գործընթացի փաստաթղթի՝ Մադրիդյան սկզբունքների հիմքում։ Այդ ընթացքի խզման առիթ դարձավ Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը 2018թ. իշխանափոխությունից հետո, երբ հայտարարվեց, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը պետք է սկսել 0-ական կետից, ինչը կեղծիքների ու նենգափոխումների արշավ սանձազերծեց մինչև 2019թ. շարունակված բանակցային գործընթացի ու դրա ընթացքում կիրառված Մադրիդյան սկզբունքների և դրա հիման վրա կառուցված նախագծերի դեմ[3]։ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության միջնորդական առաքելության գործունեության՝ Մադրիդյան սկզբունքների հիման վրա այդ 13 տարիների ընթացքում ձևավորված անթերի իրավական հիմքեր ունեցող կարգավորման գործընթացի զրոյացումը պատրվակ դարձավ 2020թ. ադրբեջանա-

[3] Թորոսյան Տ., 2020թ. պատերազմ. Նախադրյալները, հետևանքները և աղետի հաղթահարման հնարավորությունները, https://luys.am/img/artpic/small/17421d60c00deb99e93e2020Թ.-ՊԱՏԵՐԱԶՄ.-ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ-ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ-ԵՎ-ԱՂԵՏԻ-ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ-ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.pdf.

թուրքական ագրեսիայի համար, որի աղետալի արդյունքները կտրուկ փոխեցին կարգավորման ռազմաքաղաքական բաղադրիչի ազդեցությունը հետագա զարգացումների վրա։[4] Եթե 2007-2019թ. բանակցային սեղանին առկա էր կարգավորման սխեմա, որը մշակել էին Ռուսաստանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի ներկայացուցիչ համանախագահները՝ միջազգային իրավունքի երեք սկզբունքների (ազգերի ինքնորոշման իրավունք՝ Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի հարաբերությունների կարգավորման համար, տարածքային ամբողջականության սկզբունք՝ Ադրբեջանի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման համար, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունք՝ բանակցությունների միջոցով խնդիրների լուծման համար) հիման վրա, ապա այդ ագրեսիայի արդյունքում իրավիճակը կտրուկ փոխվել է։ Կարգավորման գործընթացի առանցքային խնդիրը՝ ԼՂՀ կարգավիճակի որոշման հարցը, դուրս է մղված գործընթացների օրակարգից. ռուսական կողմը պնդում է, իսկ Հայաստանի իշխանությունները համաձայն են, որ կարգավիճակի հարցը «պետք է թողնել հաջորդ սերունդներին, երբ կձևավորվեն այդ հարցի՝ բոլորի համար ընդունելի արդար լուծման պայմաններ»։[5] Սակայն լուծման «բոլորի համար ընդունելի» և «արդար» որակումները համադրելի չեն, քանի որ առաջինն ինքնորոշման հակամարտությունների համար երբեք իրագործելի չի եղել, մինչդեռ «արդարը» իրական է ու չափելի՝ դա իրավական լուծումն է։ Հետևաբար, հազարավոր կյանքեր խլած երկու պատերազմներից հետո ոչ թե պետք է հետաձգել կարգավիճակի որոշումը՝ փնտրելու համար «բոլորի համար ընդունելի» անհասանելի լուծում, այլ կիրառել միջազգային հանրության կողմից հակամարտության կողմերին պարտադրված լուծում՝ միջազգային իրավունքի հիման վրա, ինչպես դա արվել է մյուս ինքնորոշման հակամարտությունների (Արևելյան Թիմոր, Հարավային Սուդան, Կոսովո և այլն) դեպքերում։

---

[4] Նույն տեղում

[5] Посол России в Армении: Вопрос статуса Нагорного Карабаха следовало бы оставить следующим поколениям, https://news.am/rus/news/727936.html

Դա են պահանջում նաև 2020թ. պատերազմից հետո արձանագրված բազմաթիվ փաստերը։ Ռուսաստանի նախագահի միջնորդությամբ ընդունված 2020թ. նոյեմբերի 9-ի՝ պատերազմի դադարեցման վերաբերյալ հայտարարության հրապարակումից հետո իրադարձությունների զարգացման ընթացքը ակնհայտորեն վկայում է, որ Ադրբեջանը չի կատարում անգամ մի շարք դրույթներով միջազգային իրավունքի նորմերին հակասող, սակայն իր շահերից բխող ու Հայաստանին պարտադրված այդ փաստաթղթով արձանագրված պարտավորությունները[6]։ Թեև պատերազմի դադարեցումից հետո անցել է ավելի քան երկու տարի, սակայն Բաքվում պահվում են մի քանի տասնյակ հայ գերիներ, որոնք միջազգային իրավունքի նորմերի ու այդ հայտարարության համաձայն պետք է Հայաստան վերադարձվեին։ Շարունակվում է Լեռնային Ղարաբաղի մի շարք քաղաքների ու գյուղերի օկուպացիան Ադրբեջանի կողմից, դրանց հայ բնակչությունը պատերազմական հանցագործությունների հետևանքով դուրս է մղվել բնակության վայրերից ու ենթակա է ցեղասպանության միանգամայն իրական վտանգի[7]։ Ավելին, անպատժելիությունն ընկալելով որպես միջազգային հանրության խրախուսանք, Արդրբեջանի զինված ուժերը ներխուժել են Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածք, օկուպացրել են 140 քառակուսի կիլոմետր ու պահանջում են նոր տարածքներ՝ սպառնալով նոր պատերազմով։

---

[6]Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации, 9.11.2020, https://kremlin.ru/events/president/news/64384

[7]Sénat, Résolution N° 26 portant sur la nécessité de reconnaître la République du Haut-Karabagh, 25 novembre 2020, http://www.senat.fr/leg/tas20-026.pdf
Assessing U.S. Policy in the Caucasus, Senate of USA, November 16th, 2022November 16th, 2022, https://www.foreign.senate.gov/hearings/assessing-us-policy-in-the-caucasus;
Lemkin Institute Statement on Self-Determination of Armenians in Artsakh (South Caucasus): There is No “Peace” or “Prosperity” through Genocide, 24.11.2022, https://www.lemkininstitute.com/statements-new-page/statement-on-self-determination-of-armenians-in-artsakh-(south-caucasus)%3A-there-is-no-peace-or-prosperity-through-genocide

Չափազանց բարդ իրավիճակի հանգուցալուծման ուղիները նախանշելու նպատակով հոդվածում քննարկվում են առանցքային նշանակություն ունեցող հետևյալ հարցերը՝

- Ղարաբաղյան հակամարտության կարգավորման սխեման մինչև 2020թ. պատերազմը,
- կարգավորման սխեմայի վերաբերյալ ազդեցիկ դերակատարների դիրքորոշումների փոփոխությունը նոր աշխարհակարգի համար պայքարի ազդեցության ներքո,
-կարգավորման հնարավորություններն աշխարհաքաղաքական մրցակցության նոր փուլում. միջազգային իրավո՞ւնք, թե՞ ցեղասպանություն:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման սխեման մինչև 2020թ. պատերազմը

Հակամարտությունների կարգավորման գործընթացներն ունեն երկու հիմնական բաղադրիչներ՝ իրավական ու քաղաքական:[8] Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում առաջինն առանցքային դերակատարություն ստացավ, երբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Մադրիդյան սկզբունքներ կոչվող բազային փաստաթուղթը կողմերին փոխանցեցին 2007թ. նոյեմբերին Մադրիդում, որը 2009թ. հակամարտության կողմերն ընդունեցին որպես բանակցությունների հիմք[9] ու մինչև 2019թ. այն մնաց բանակցային սեղանին: Այն ներառում է միջազգային իրավունքի երեք սկզբունքներ՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունք, տարածքային ամբողջականության սկզբունք և ուժի ու ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունք, որոնց հիման վրա պետք է լուծվեր հակամարտությունը, ինչպես նաև 6 տարրեր, որոնք պետք է դառնային բանակցային

[8] **Torosyan T.** Conflict Resolution in the Framework of the International Law. Case of Nagorno- Karabakh. Yerevan, 2010.
[9] Joint Statement by the Heads of Delegation of the Minsk Group Co-Chair Countries and the Foreign Ministers of Azerbaijan and Armenia, Athens, December 1, 2009

քննարկումների առարկա[10]: Բանակցությունների ընթացքում մշակվել են նշված տարրերի/խնդիրների լուծումներ, որոնք համադրվել են միմյանց հետ և այդ գործընթացի տարբեր փուլերում ձևավորված տարբերակները/խմբագրումները ներկայացվել են հակամարտության կողմերին: Դրանցից վերջինը Մինսկի խմբի համանախագահները կողմերին փոխանցել են 2019թ. հունիսին: Մինսկի խմբի ռուս համանախագահ Ի. Պոպովը 2021թ. հունվարին գաղտնազերծել է այդ տարբերակի սխեման.«Կազանյան փաստաթղթի հետ շատ բաներով համընկնող այդ պլանի հիմքում ընկած են ԼՂ կարգավորման բազային սկզբունքները, որոնց շարքում առաջին փուլում հինգ շրջանների վերադարձն է Ադրբեջանին, իսկ երկրորդ փուլում՝ երկու շրջանների, ընդ որում, հատուկ ընդգծում եմ, դա կապելով Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հետ: Առաջին փուլի Երևանի հետաքրքրություններն արտացոլող տարրերից են Լեռնային Ղարաբաղի՝ իր բնակչության լիարժեք կենսագործունեության ապահովման իրավունքի ընդունումը, ԼՂ ներկայացուցիչների մասնակցությունը ԵԱՀԿ նիստերին, շրջափակման վերացումը, ուժի չկիրառման վերաբերյալ կողմերի պարտավորությունների ստանձնումը և այլն... Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի խնդրի լուծման տարբերակներին, ապա վերջին տարիներին բանակցությունների սեղանին գտնվող առաջարկները՝ որպես վերջնական նպատակ նախատեսում էին, մեջբերում եմ, «Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումը՝ կողմերի համաձայնեցրած ժամկետներում ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի հովանու ներքո համաժողովրդական քվեարկության անցկացում, որը կարտահայտի Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ կամարտահայտությունը և կունենա իրավականորեն պարտադիր բնույթ՝ միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների համաձայն: Ընդ որում, քվեարկության դրվող հարցը կամ հարցերը

[10] Press Statement by the Co-Chairs of the OSCE Minsk Group on the Upcoming Meeting of President Aliyev and Prime Minister Pashinyan, 9 March 2019

որևէ ձևով չեն սահմանափակվի, իսկ քվեարկության ցանկացած արդյունք կողմերը կհարգեն»: Ի դեպ, Լաչինի միջանցքի լայնությունն ու կարգավիճակը ևս առաջարկվում էր դիտարկել միայն երկրորդ փուլում՝ հաշվի առնելով Քելբաջարի և Լաչինի շրջաններն Ադրբեջանին վերադարձնելը»[11]:

2007-2019թթ. Մինսկի խմբի համանախագահ երկրների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները և հակամարտության կողմերը համատեղ հայտարարություններով բազմիցս արձանագրել են, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը պետք է լուծվի միջազգային իրավունքի վերոհիշյալ երեք սկզբունքների, այդ թվում՝ ինքնորոշման իրավունքի հիման վրա: 2020թ. ադրբեջանական ռազմական ագրեսիայից հետո էլ՝ մինչև 2021թ. ապրիլ, Մինսկի խմբի համանախագահներն ու համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարները մի շարք հայտարարություններով վերահաստատեցին իրենց դիրքորոշումը՝ բանակցությունները վերսկսելու և ԼՂ հակամարտությունը Մադրիդյան սկզբունքների հիման վրա լուծելու վերաբերյալ:[12] Սակայն կարգավորման գործընթացն ամբողջությամբ զրկվեց ինստիտուցիոնալ հիմքից 2022թ. փետրվարին սկսված ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկով, որի արդյունքում դադարեցին գործել Արևմուտքի ու Ռուսաստանի միջև ինստիտուցիոնալ շփումների մեխանիզմները, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը, որի համանախագահ երկրները կարգավորման

[11]Ответ российского сопредседателя в Минской группе ОБСЕ, Посла по особым поручениям МИД России И.В.Попова на вопрос СМИ относительно статьи Премьер-министра Армении Н.В.Пашиняна «Истоки 44-дневной войны», https://www.mid.ru/ru/foreign_policy/news//asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4519475

[12] Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, 3 December 2020, https://www.osce.org/minsk-group/472419
Statement of the OSCE Minsk Group Co-Chairs , https://www.osce.org/minsk-group/473649, 14 December 2020
Statement of the OSCE Minsk Group Co-Chairs , https://www.osce.org/minsk-group/483416, 13 April, 2021

նկատմամբ իրենց դիրքորոշումները սկսեցին կառուցել առանձին-առանձին, այլ տրամաբանությամբ:

Կարգավորման սխեմայի վերաբերյալ ազդեցիկ դերակատարների դիրքորոշումները նոր աշխարհակարգի համար կոշտ պայքարի պայմաններում

Հակամարտությունների կարգավորման գործընթացներում ազդեցիկ նշանակություն ունի տարածաշրջանում հիմնական աշխարհաքաղաքական դերակատարների շահերի բախումը, որն ավելի է սրվում աշխարհակարգի տրանսֆորմացիաների շրջափուլ-ներում, որի ցայտուն օրինակներից է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը:[13]

ԽՍՀՄ փլուզումով դադարեց գործել երկբևեռ աշխարհա-կարգը և սկիզբ դրվեց նոր աշխարհակարգի ձևավորմանը, որը, ըստ Միացյալ Նահանգների կառավարող շրջանակների, պետք է լիներ միաբևեռ՝ ամերիկյան հեգեմոնիայով, թեև արևմտյան ակադեմիա-կան շրջանակները զգուշացնում էին դրա վտանգավոր հետևանքների մասին:[14] Մինչև 2018թ., երբ Հայաստանում տեղի ունեցավ իշխանափոխություն, Մինսկի խմբի համանախագահող պետությունները, թեև արդեն ունեին նոր աշխարհակարգի վերաբերյալ լուրջ տարաձայնություններ ու նախկին ԽՍՀՄ տարածքում շահերի կոշտ բախումներ (2008թ.՝ ռուս-վրացական

[13] **Torosyan T., Vardanyan A.** The South Caucasus Conflicts in the Context of Struggle for the Eurasian Heartland, *Geopolitics*, 2015, **20,** 3, 559-582.

[14] **Waltz K**., The Anarchic Structure of World Politics, 2003, *R. Art & R. Jervis (Eds.), International Politics: Enduring Concepts and Contemporary Issues*. (pp. 124-130). London: Pearson. Web.

Ikenbrry G.J., Mastanduno M., Wohlforth W.C., Unipolarity, state behavior, and systemic consequences, *World Politics*, 2009, 61, 1 1-27.

Foot R., MacFarlane S. N., and Mastanduno M. *US Hegemony and International Organizations: The United States and Multilateral Institutions*. Oxford University Press, 2003.

Kapstein E., Mastanduno M. (eds), Unipolar Politics: Realism and State Strategies After the Cold War. Columbia University Press. 1999.

պատերազմ, 2014թ.՝ Ղրիմ, Դոնբաս, ԵՄ Արևելյան գործընկերության երեք պետությունների՝ Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա, անթաքույց ձգտումը դեպի ինտեգրում Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին և Ռուսաստանի հակազդումները դրան, և այլն), սակայն ԼՂ խնդրի կարգավորման հարցում պահպանում էին միասնական, միջազգային իրավունքի սկզբունքների վրա հիմնված հավասարակշռված դիրքորոշում: Նաև դրա շնորհիվ հաջողվեց մի քանի օրվա ընթացքում դադարեցնել 2016թ. Ադրբեջանի փորձը՝ ռազմական ճանապարհով լուծելու հակամարտությունը՝ ոտնահարելով միջազգային հարաբերությունների կարգավորման հիմնարար սկզբունքներից մեկը՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքը, որը կողմերը և միջնորդները 2009թ. արձանագրել էին որպես Ղարաբաղյան հակամարտության կարգավորման երեք սկզբունքներից մեկը:[15] Ակնհայտ է, որ Ադրբեջանը ռազմական ագրեսիայի դիմել էր՝ տեսնելով, որ բանակցությունները տանում են դեպի Լեռնային Ղարաբաղի անկախության միջազգային ճանաչում՝ ինքնորոշման իրավունքի հիման վրա: Ագրեսիայի ձախողումից մի քանի ամիս անց Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը դժգոհում էր.«Մեզ վրա ճնշումներ են գործադրվում՝ ստիպելու համար, որ մենք համաձայնենք ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Մենք շատ մանրամասներ չենք բացահայտում, քանի որ կան դիվանագիտության կանոններ: Բայց Ադրբեջանի սևացմանն ուղղված Արևմուտքի, տարբեր ոչ կառավարական կազմակերպությունների և երկրի ներսում «հինգերորդ շարասյան» արշավի հիմքում ընկած է ճնշումը՝ նպատակ ունենալով ստանալ Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման համաձայնություն»[16]:

---

[15] Joint Statement by the Heads of Delegation of the Minsk Group Co-Chair Countries and the Foreign Ministers of Azerbaijan and Armenia Athens, December 1, 2009

[16] Алиев И., Азербайджан пытаются заставить признать независимость Карабаха, https://eadaily.com/ru/news/2016/10/07/aliev-azerbaydzhan-pytayutsya-zastavit-priznat-nezavisimost-karabaha

Սակայն արդեն նկատելի էր, որ նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացն աստիճանաբար տրանսֆորմացվում է՝ դեռևս միաբևեռ աշխարհակարգը լիովին չձևավորված սկսում է փլուզվել լիբերալ աշխարհակարգը: Ըստ Գ. Ջ. Այքընբերիի[17], դա տեղի էր ունենում այն պատճառով, որ նրա առաջատար հովանավորները՝ սկսած ԱՄՆ-ից, նրանից հրաժարվեցին. եթե ամերիկացիների մի մասը, օրինակ նախագահ Դ. Թրամպը, ակտիվորեն «պայթեցնում էր» ամերիկյան առաջնորդությունը, ապա մյուս մասը անցավ հաջորդ՝ գլոբալ դարաշրջանին, մեծ տերությունների մրցակցությանը: Իսկ «վերադարձը գերտերությունների մրցակցությանը կքայքայի այն, ինչ մնացել է գլոբալ ինստիտուտներից, որոնց կառավարություններն ապավինում են՝ ընդհանուր խնդիրները լուծելիս: Լիբերալ ժողովրդավարությունները ավելի կթաղվեն պառակտման հորձանուտում և դրանով կկորցնեն գլոբալ կանոններ և նորմեր ձևավորելու իրենց կարողությունը»[18]:

Այս տեսակետի հրապարակմանը հաջորդած իրադարձությունները՝ այդ թվում և Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացին առնչվող, լիովին հաստատում են Ջ. Այքնբերրիի ինչպես գնահատականներն, այնպես էլ մտավախությունները: Այդ գործընթացը 30 տարի գտնվում էր հակամարտությունների կարգավորման իրավասություններ ունեցող երկու գլոբալ ինստիտուտներից մեկի՝ ԵԱՀԿ-ի լիազորությունների ներքո, որին աջակցում էին մյուս բոլոր գլոբալ ինստիտուտները: 2022 թվականից ԵԱՀԿ-ն որևէ ինստիտուցիոնալ արձագանք չունի ատեղծված իրավիճակին ու հակամարտությանն առնչվող իրադարձություններին: de jure չի լուծարվել, սակայն de facto չի գործում Մինսկի խումբը, որի արդյունքում համանախագահ երկրների դիրքորոշումները կորցրեցին 13 տարվա ընթացքում հաջողությամբ կիրառված իրավական հիմքն ու տրամաբանությունը և ստացան միանգամայն նոր բովանդակություն:

---

[17] **Ikenberry G. J.,** The Next Liberal Order: The Age of Contagion Demands More Internationalism, Not Less, *Foreign Affairs*, July/August 2020.

[18] Նույն տեղում

Գործընթացն ու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ճակատագիրը դուրս են նաև մյուս գլոբալ ինստիտուտների ուշադրությունից, որոնք իրավիճակի ծայրահեղ սրման պահերին սահմանափակվում են կողմերին կոչ անելով դադարեցնել ռազմական գործողությունները: Այդ առումով հատկանշական է Եվրախորհրդարանում Հարավային Կովկասի հետ հարաբերությունների հարցերով պատվիրակության ղեկավար Մ. Կալյուրանդի արձագանքը 2022թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի սկսած նոր ագրեսիային՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ. «Խստորեն դատապարտում եմ երեկ գիշեր Ադրբեջանի նախաձեռնած լայնամասշտաբ ռազմական հարձակումը Հայաստանի Հանրապետության բազում թիրախների վրա: Այս նոր ագրեսիան շարունակությունն է Բաքվի՝ մարտին և օգոստոսին Լեռնային Ղարաբաղի շփման գծի հրադադարի լուրջ խախտումների: Բաքուն օգտվել է համաշխարհային և տարածաշրջանային իրավիճակից՝ ստեղծված Ուկրաինայի նկատմամբ Ռուսաստանի ագրեսիայի հետևանքով: Ես դիմում եմ միջազգային հանրությանը, և, մասնավորապես, Եվրոպական միությանը՝ պարզորոշ պատասխանով արձագանքելու այս անթույլատրելի ուժի կիրառմանը: Այժմ անատամ հայտարարությունների ժամանակը չէ՝ զսպվածության կոչ անելու «երկու կողմերին»»[19]:

Չեն գործում ոչ միայն գլոբալ ինստիտուտները, այլև գլոբալ կանոններն ու նորմերը: Թեև գործընթացը 15 տարի իրականացվել է միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի հիման վրա, սակայն այսօր մատնվել է ինքնահոսի: Ոգևորված ռազմական ագրեսիայի ու դրա հետևանքների համար պատասխանատվության բացակայությունից, Ադրբեջանը առաջ է գնում՝ հայտարարում է, որ ոչ մի Լեռնային Ղարաբաղ գոյություն չունի, ոչ մի կարգավորման

[19] **Marina Kaljurand**: This is not time for toothless statements calling for restraint from 'both sides', 13.09.2022 https://twitter.com/MarinaKaljurand/status/1569650822908379139?ref_src=twsrc%5Egoogle%7Ctwcamp%5Eserp%7Ctwgr%5Etweet

խնդիր չկա։[20] Գլոբալ ինստիտուտների բնականոն գործունեության խաթարումները, գլոբալ սկզբունքների ու նորմերի դուրսմղումը գործընթացներից վերջիններս զրկում է տարբեր խմբերի միակողմանի շահերը հավասարակշռող մեխանիզմներից, որոնց բացակայությունը խրախուսում է կոշտ, հաճախ՝ ռազմական ուժի ու պատերազմական հանցագործությունների կիրառմամբ խնդիրների լուծումը, ինչը կարող է հագեցնել միջազգային իրավունքի նորմերի կոպիտ ոտնահարումների, մարդասիրական աղետների ու մարդկության դեմ կատարվող հանցագործությունների։ Նման հետևանքներով է հղի 2022թ. փետրվարին սկսված ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում մի շարք միջազգային ինստիտուտների մեխանիզմների խաթարումը։ Ինպես Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ջ. Բորելն է զգուշացնում, «Սեղանին դրված են այն սկզբունքները, որոնց վրա կառուցված են միջազգային հարաբերությունները, նախ՝ ՄԱԿ կանոնադրության և Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքները»[21] և առաջարկում է ուժային մեխանիզմներ ստեղծել այդ սկզբունքներն ու արժեքները պաշտպանելու համար, քանի որ «մենք ապրում ենք մի աշխարհում, որը ձևավորվել է կոպիտ ուժի քաղաքականությամբ, որտեղ ամենուրեք զինված են և որտեղ մենք բախվում ենք նարրատիվների անխնա ճակատամարտերի»։ Առաջարկը չափազանց կարևոր է, քանի որ այդ ճակատամարտերը հաճախ վերածվում են իսկական պատերազմների, որոնք ուղեկցվում են ոչ միայն միջազգային իրավունքի կոպիտ խախտումներով, այլև պատերազմական հանցագործություններով ու մարդասիրական աղետներով։ Սակայն նաև պետք է հաշվի առնել այն զգուշացումները, որ Արևմուտք-Ռուսաստան կոշտ դիմակայության պայմաններում ծագած գազային ճգնաժամի ազդեցությամբ ԵՄ աշխարհաքաղաքական

[20] **Kursad Zorlu**, Artik Daglik Karabag kavrami kullanilmayacak, www.haberturk.com/yazarlar/prof-dr-kursad-zorlu/3027864-artik-daglik-karbag-kavrami-kullanilmayacak

[21] **Borrell Josep Fontelles**, Europe in the Interregnum: our geopolitical awakening after Ukraine, https://geopolitique.eu/en/2022/03/24/europe-in-the-interregnum-our-geopolitical-awakening-after-ukraine/

հավակնությունները կարող են Հարավային Կովկասում միջազգային իրավունքի կոպիտ խախտումների վրա աչք փակելու պատճառ դառնալ:[22]

Գազային մաթեմատիկայի աշխարհաքաղաքական մետամորֆոզները: Այն բանից հետո, երբ ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով միանգամայն իրական դարձավ Մոսկվայի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների շրջանակում ԵՄ անդամ պետությունների հրաժարումը ռուսական գազի ներկրումից, եվրոպական կառույցների ու պետությունների ղեկավարների այցերի առանցքային թեման դարձավ էներգակիր-ների ներկրման այլընտրանքային հնարավորությունների ապահո-վումը: Դրա արդյունքներից մեկն այն է, որ հուլիսին Բրյուսելն ու Բաքուն համաձայնագիր ստորագրեցին, ըստ որի 2022թ. Ադրբեջանը Եվրոպա կարտահանի 12 միլիարդ խորանարդ մետր գազ՝ նախապես պայմանավորված 10 միլիարդի փոխարեն, իսկ մինչև 2027 թվականը այդ թիվը կհասցնի 20 միլիարդի:[23] Գնահա-տելու համար Եվրոպայում ստեղծված բարդ իրավիճակի հանգու-ցալուծման տեսակետից այս գործարքի նշանակությունը, պետք է արձանագրել, որ 2021թ. Ադրբեջանից Եվրոպա է արտահանվել 8 միլիարդ խորանարդ մետր գազ, ինչը այդ ընթացքում Եվրոպա ներկրված 350 միլիարդ խորանարդ մետր ընդհանուր ծավալով գազի երկու տոկոսից մի փոքր ավելի է: Այն դեպքում, երբ 2021թ. Ռուսաստանի մասնաբաժինը դրանում 45 տոկոս էր:[24] Հետևաբար, ակնհայտ է, որ ադրբեջանական գազը Եվրոպա ներկրվող ընդհանուր ծավալների մեջ շատ փոքր է և ռուսական մասնաբաժնին փոխարինելու առումով ոչ մի նշանակություն չունի: Ավելին՝ որևէ հեռանկար ևս չունի: Բրիթիշ փեթրոլեումը հաստա-տել է, որ «Շահ Դենիզ» հանքավայրը այսօր արտահանվող

[22]Financial Times: South Caucasus tests the geopolitical ambitions of the EU, 08.10.2022, www.ft.com/content/de4b0dd7a-5435-4220-9ae6-792b38c1e2e7

[23] The memorandum is a win for Baku while committing it to do little, https://eurasianet.org/azerbaijan-and-eu-agree-to-strategic-energy-partnership

[24] Financial Times: South Caucasus tests the geopolitical ambitions of the EU, 08.10.2022, www.ft.com/content/de4b0dd7a-5435-4220-9ae6-792b38c1e2e7

ծավալներին լրացուցիչ 10 միլիարդ խորանարդ մետր գազ ավելացնելու հնարավորություն չունի:[25] Սակայն պաշտոնական Բաքուն փորձում է օգտագործել Եվրոպայի համար բարդ ժամանակաշրջանը «Հարավային գազային միջանցքի» կշիռը մեծացնելու համար. հայտարարում է, որ կկարողանա կատարել 2027թ. վերաբերյալ պարտավորությունը, եթե միլիարդավոր դոլարների ներդրումներ արվեն այդ խողովակաշարի ընդլայնման համար և կնքվեն գազի գնման երկարաժամկետ պայմանագրեր:[26] Ավելին, 3500 կիլոմետր ձգվող այդ խողովակաշարի առաջին հատվածի՝ Հարավային Կովկասի խողովակաշարի (SCP) ընդլայնման հետ կապված կա ևս մեկ խնդիր՝ սեփականատերերի թվում են ռուսական Լուկոյլը (19,9%) և Իրանի պետական նավթային ընկերությունը (10%):[27] Սակայն ակնհայտ է, որ ամենաբարդ խնդիրը մնում է անհրաժեշտ ծավալի գազը: Չպետք է մոռանալ, որ մի քանի տարի առաջ նույն՝ Ադրբեջանում լրացուցիչ գազի բացակայության պատճառով ԵՄ-ն դադարեցրեց «Նաբուկո» նախագիծը, որով նախատեսվում էր Եվրոպա տեղափոխել կասպյան գազը:[28] Ընդ որում, տարիներ առաջ, երբ ԵՄ-ն նոր էր ձեռնամուխ եղել «Հարավային գազային միջանցքի» իրականացմանը՝ «Նաբուկո» նախագծի միջոցով, մասնագետները զգուշացնում էին, որ Եվրահանձնաժողովի ընտրությունը սխալ է, քանի որ այն հաշվի չի առնում այնպիսի առանցքային գործոններ, ինչպիսիք են ԵՄ առանձին անդամ պետությունների տարամիտվող, իսկ երբեմն էլ հակասական շահերը, Կասպյան ավազանի աշխարհա-

[25] **O'Byrne D.**, Azerbaijan's Russian gas deal raises uncomfortable questions for Europe, 22.11.2022, https://eurasianet.org/azerbaijans-russian-gas-deal-raises-uncomfortable-questions-for-europe

[26] Azerbaijan warns investment needed to ensure jump in EU gas flows, Nov 3, 2022, https://www.ft.com/content/bdde9836-6d31-470c-90bf-bdf0ff68f994

[27] Նույն տեղում

[28] **Siddi M.**, The EU's Botched Geopolitical Approch to External Energy Policy: The Case of the Southern Gas Corridor, 2019, 24, 1, 124-144

քաղաքական մարտահրավերները, առևտրային սահմանափակումները:[29] Պատմությունը ճշգրտությամբ կրկնվում է:

Անգամ 2022թ. համար Ադրբեջանի խոստացած 12 միլիարդ խորանարդ մետրը Բաքուն չի կարող ապահովել սեփական գազի հաշվին: Սակայն, քանի որ խնդիրը վերաբերում է ոչ մեծ ծավալների՝ լրացուցիչ 1-1,5 միլիարդ խորանարդ մետրի, Ադրբեջանը որոշել է այն գնել ռուսական «Գազպրոմից», որը հայտարարել է նոյեմբերի 15-ից մինչև 2023թ. մարտ ադրբեջանական ՍՈԿԱՐ պետական գազային ընկերությանը 1 միլիարդ խորանարդ մետր ծավալով գազ մատակարարելու մասին:[30] Դա Բաքվին հնարավորություն կտա ԵՄ-ին վաճառել այս տարվա համար հուլիսին խոստացած գազը՝ փորձելով ձևավորել հուսալի գործընկերոջ համբավ, քանի որ մինչև 2027թ. գազի արտահանումը դեպի Եվրոպա կրկնապատկելու համաձայնագիրը կարող է Բրյուսելին գրավել դեպի նոր ներդրումներ: Իսկ արդյո՞ք այդ նույն մեխանիզմը հնարավոր չի լինի օգտագործել՝ ապահովելու համար այդ կրկնապատկումը, հատկապես որ Ռուսաստանն այդ ճանապարհով կկարողանա Եվրոպային միջնորդավորված վաճառել լրացուցիչ 10 միլիարդ խորանարդ մետր: Առավել ևս, որ Եվրոպայում հակված չեն այլ գնորդից ռուսական ծագման գազ չգնելու:[31]

Հայտնի են մի շարք դեպքեր, երբ էներգակիրների միջնորդավորված վաճառքը պատժամիջոցների առկայության դեպքում հնարավորություն է տվել շրջանցել խոչընդոտը:

Տարիներ առաջ պատժամիջոցների արգելքը հաղթահարելու նպատակով Իրանի նավթը վաճառվում էր Իրաքի միջոցով: Այսօր այդ մեխանիզմը կիրառվում է ռուսական գազի համար: «Թուրքա-

[29] **Sartori N.,** The European Commission's Policy Towards the Southern Gas Corridor: Between National Interests and Economic Fundanetals, January 2012, IAI Working Papers 1201

[30] Gazprom could supply up to 1 bcm of gas to Azerbaijan this winter, 18.11.2022, https://interfax.com/newsroom/top-stories/85105/

[31] В Германии не нашли противоречий в покупке российского газа у Азербайджана, 21 ноября 2022, https://ria.ru/amp/20221121/gaz-1833127973.html

կան հոսք» խողովակաշարով այն վաճառվում է Անկարային, ապա Թուրքիան դրա մի մասը վաճառում է Եվրոպային: Մինչ պատժամիջոցների կիրառումը Եվրոպա ուղարկվող գազի զգալի մասն այսօր Ռուսաստանը վաճառում է Չինաստանին, վերջինս, այն վերածելով հեղուկ գազի, վաճառում է Եվրոպային: Ընդ որում այնպիսի ծավալներով, որը գերազանցում է Եվրոպային Միացյալ Նահանգների վաճառած գազի ծավալները: Փաստորեն ռուսական գազի զգալի մասը, այս կամ այն ձևով միջնորդավորված, հասնում է Եվրոպա, սակայն մի քանի անգամ ավելի թանկ: Դրա շնորհիվ, ավելի քիչ գազ վաճառելով, Մոսկվան ստանում է ավելի մեծ եկամուտներ, քան ստանում էր մինչ պատժամիջոցները: Այսպիսով, պատժամիջոցների արդյունքում տուժում են եվրոպացիները՝ մի քանի անգամ ավելի թանկ վճարելով ինչպես գազի, այնպես էլ դրանից կախված մի շարք ապրանքների համար, ինչպես նաև ԵՄ-ն, որը հանուն անիրական գազային ծրագրերի իրագործման նահանջում է այն արժեքների անվերապահ պաշտպանությունից, ինչով տասնամյակներ շարունակ շահեկանորեն առանձնացել է միջազգային կազմակերպությունների շարքում: Շահում են ամերիկյան խոշոր ընկերությունները՝ բարձր գներով հեղուկ գազ արտահանելով Եվրոպա, ինչպես նաև միջնորդները՝ Չինաստանը, Թուրքիան, Ադրբեջանը և այլն, որոնք ռուսական գազը վերավաճառում են գազային խողովակաշարերի սարդոստայնում խճճված ԵՄ-ին:

ԽՍՀՄ փլուզումից հետո ձևավորված երազանքը, որ նորանկախ պետությունները կարող են լուծել Արևմուտքի էներգետիկական խնդիրները և աշխարհաքաղաքական առավելություն տալ Ռուսաստանի, Իրանի և Չինաստանի նկատմամբ, գայթակղիչ դարձավ ստրատեգների ու նավթային ընկերությունների ղեկավարների համար: Սակայն անցած դարի 90-ական թվականների վերջում պարզ դարձավ՝ պատկերացումը, որ Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի նավթը կարող է լուծել Արևմուտքի էներգետիկ անվտանգության խնդիրը երկարա-

տև ժամանակահատվածի համար, սխալ է:[32] Թեև իրավիճակն ու նախադրյալները նույնն են նաև կասպյան գազի հետ կապված, ինչը ցուց է տալիս նաև վեր բերված վերլուծությունը, սակայն այս դեպքում գայթակղությունն ավելի երկար կյանք ունի ԵՄ պաշտոնյաների շրջանում: Այդ համատեքստում պետք է դիտարկել ԵՄ կառույցներից մեկի՝ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի և Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի փորձերը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում միջնորդի դերկատարություն ստանձնելու նպատակով: Հետևաբար, պետք է պարզել, ինչպես Ֆայնենշլ թայմսն է հարցադրում անում, թե արդյոք ԵՄ-ն կարո՞ղ է դառնալ ազնիվ միջնորդ՝ Ադրբեջանի հետ իր խճճված էներգետիկ կապերի պայմաններում:[33]

Ֆրանսիայի (ԵՄ) դիրքորոշումը: ԵՄ-ն Մինսկի խմբի համանախագահների գործունեության մեջ ունեցել է անուղղակի մասնակցություն՝ ի դեմս խմբի համանախագահներից մեկի՝ ԵՄ հիմնադիր անդամ Ֆրանսիայի, և շարունակաբար իր աջակցությունն է հայտնել համանախագահների գործունեությանն ու պնդել, որ Ղարաբաղյան հակամարտությունը պետք է լուծվի այդ ձևաչափով՝ համանախագահների առաջարկած սկզբունքների հիման վրա: Այդ պատճառով ԵՄ և Ֆրանսիայի դիրքորոշումները գրեթե նույնական են և այս հոդվածում դիտարկվում են մեկ հարթությունում: Մինչև 2020թ. պատերազմն այն չի տարբերվել Մինսկի խմբի մյուս համանախագահների ընդհանուր դիրքորոշումից: Այդ պատերազմին և նոյեմբերի 9-ի՝ պատերազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ հայտարարությանը, թե Ֆրանսիան և թե ԵՄ-ն արագորեն արձագանքել են:

Ինչպես ագրեսիայի ընթացքում, այնպես էլ դրանից հետո ծավալված իրադարձությունների վերաբերյալ տևական ժամանակ Ֆրանսիայի և ԵՄ դիրքորոշումները փաստարկված էին և

[32] **Manning R., Jaffe A.,** The myth of the Caspian “great game”: the real geopolitics of energy. *Survival,* 1998, 40(4), 112–129. doi:10.1080/713660015

[33] Financial Times: South Caucasus tests the geopolitical ambitions of the EU, 08.10.2022, www.ft.com/content/de4b0dd7a-5435-4220-9ae6-792b38c1e2e7

իրավական առումով անթերի։ Արդեն իսկ պատերազմի ընթացքում, ինչպես Ֆրանսիայի խորհրդարանի երկու պալատները, այնպես էլ նախագահ Մակրոնը[34] հստակորեն արձանագրել են Ադրբեջանի ագրեսիայի փաստը, դատապարտել են Թուրքիայի կողմից Սիրիայից վարձկանների տեղափոխումն ու օգտագործումը պատերազմական գործողություններում, իսկ արտաքին գործերի նախարար Ժ. Ի. Լը Դրիանը իր գերմանացի և լեհ գործընկերների հետ ասուլիսի ժամանակ քննադատել է Թուրքիայի դերակատարությունն այդ պատերազմի ժամանակ և հայտարարել[35], որ այդ հարցում ռազմական հաղթանակ չի լինի, ուստի հրադադարը պետք է պահպանվի։ Ռազմական գործողությունների դադարեցումից հետո գնահատականներն ավելի ամբողջական էին։ Ժ. Ի. Լը Դրիանը նոյեմբերի 9-ի հայտարարության կապակցությամբ, ողջունելով կրակի դադարեցումը, հայտարարել է. «Մենք ակնկալում ենք, որ Ադրբեջանի ստանձնած պարտավորությունները խստիվ պահպանվեն և որ նրա հարձակումներն անմիջապես դադարեցվեն։ Այս համատեքստում դիմում ենք Թուրքիային՝ չձեռնարկել ոչինչ, ինչը կարող է հակասել մեր գերակա նպատակին։ Տեղում տիրող իրավիճակը՝ տեղահանված բնակչությամբ և քաղաքային վայրերում մարտերով պայմանավորված, հանգեցրեց հումանիտար լուրջ հետևանքների։ Ֆրանսիան լիարժեք դերակատարություն կունենա ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում։ Երկու կողմերի միջև բանակցությունները պետք է անհապաղ վերսկսվեն։ Դրանք պետք է թույլ տան վերադարձնել վերջին շաբաթների ընթացքում հակամարտության հետևանքով տեղահան-

[34]**Valérie Leroux**, France struggles to retain Karabakh sway after Armenia defeat: Macron was a vocal critic of the military offensive launched by Baku, 27.11.2020, https://news.yahoo.com/france-struggles-retain-karabakh-sway-110623740.html?fr=sycsrp_catchall

[35] France FM criticizes Turkey's role in Nagorno-Karabakh conflict, 15.10.2020, https://news.am/eng/news/608039.html,

ված մարդկանց և ***սահմանել Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակը***»:[36]

Միաժամանակ, Եվրամիության անունից իրավիճակը գնահատել է ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ջ. Բորելը. «Եվրամիությունը ողջունում է ռազմական գործողությունների դադարեցումը Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ նոյեմբերի 9-ին՝ Ռուսաստանի միջնորդությամբ, Հայաստանի և Ադրբեջանի հետ համաձայնեցմամբ... Ռազմական գործողությունների դադարեցումը միայն առաջին քայլն է Լեռնային Ղարաբաղի բազմամյա հակամարտության դադարեցման ուղղությամբ: ԵՄ-ն համարում է, որ անհրաժեշտ է վերականգնել բանակցային ջանքերը՝ ուղղված հակամարտության համընդգրկուն և կայուն կարգավորմանը, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշմանը: Այդ պատճառով ԵՄ-ն կրկին հայտարարում է իր լիակատար աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի միջազգային ձևաչափին, որը գլխավորում են համանախագահները, և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչին՝ այդ նպատակին հասնելու համար: ԵՄ-ն պատրաստ է արդյունավետորեն աջակցել հակամարտության ամուր և համապարփակ կարգավորման ձևավորմանը... ԵՄ-ն հիշեցնում է իր անհանդուրժողականությունը ուժի կիրառմանը, մասնավորապես կասետային սպառազինության և ֆոսֆորային զենքի կիրառմանը՝ որպես վեճերի կարգավորման միջոց: ԵՄ-ն ընդգծում է, որ միջազգային մարդասիրական իրավունքը պետք է հարգվի և կողմերին կոչ է անում կատարել պայմանավորվածությունները ռազմագերիների փոխանակման և մարդկային մասունքները հայրենիք վերադարձնելու վերաբերյալ, որոնք ձեռք

[36] Déclaration de M. Jean-Yves Le Drian – Haut-Karabagh (10 novembre 2020), https://am.ambafrance.org/Declaration-de-M-Jean-Yves-Le-Drian-Haut-Karabagh-10-novembre-2020

են բերվել հոկտեմբերի 30-ին Ժնևում, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով:»[37]

Թե Ֆրանսիան, թե Եվրամիությունը խորհրդարանական մակարդակով ավելի մանրամասն, կոշտ գնահատականներ հնչեցրեցին կատարված ռազմական ագրեսիայի և դրա աղետալի հետևանքների վերաբերյալ՝ ուղղակիորեն մատնանշելով Ադրբեջանին ու Թուրքիային: Եվրախորհրդարանը 2020 (2020\2206(INI) Արտաքին և անվտանգային ընդհանուր քաղաքականության տարեկան զեկույցի բանաձևում արձանագրեց ինչպես Ադրբեջանի ագրեսիայի ժամանակ թույլ տրված հանցագործությունները, այնպես էլ Թուրքիայի մասնակցությունը դրան՝ վճռականորեն դատապարտելով քաղաքացիական անձանց սպանություններն ու քաղաքացիական օբյեկտների և ծիսական վայրերի ոչնչացումը, հակամարտության ընթացքում կասետային սպառազինության կիրառումը, ինչպես նաև Թուրքիայի ապակայունացնող դերը Սիրիայի, Իրաքի, Լիբիայի և Լեռնային Ղարաբաղի հակամարտություններում, Թուրքիայի կողմից Սիրիայից և այլ երկրներից օտարերկրյա ահաբեկիչների տեղափոխումը Լեռնային Ղարաբաղ, ինչը հաստատում են միջազգային սուբյեկտները, այդ թվում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ պետությունները, կոչ անելով պատշաճ ձևով քննել ռազմական հանցագործությունների վերաբերյալ բոլոր մեղադրանքները և մեղավորներին պատասխանատվության ենթարկել:[38] Միաժամանակ, այդ բանաձևով հաստատագրվում է, որ տարածաշրջանի վերջնական իրավական կարգավիճակի որոշման գործընթացը պետք է գլխավորեն Մինսկի խմբի համանախագահները և այն պետք է հիմնվի Հիմնական սկզբունքների վրա:

---

[37] Nagorno-Karabakh: Declaration by the High Representative on behalf of the European Union, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2020/11/19/nagorno-karabakh-declaration-by-the-high-representative-on-behalf-of-the-european-union/

[38] REPORT on the implementation of the Common Foreign and Security Policy – annual report 2020 (2020\2206(INI), https:\www.europarl.europa.eu\doceo\document\TA-9-2021-0013_EN.pdf

Համահունչ են նաև Ֆրանսիայի Ազգային ժողովի և Սենատի ընդունած բանաձևերը. «Հաշվի առնելով, որ Եվրոպայի Խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի և ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեի զեկույցները վկայում են Ադրբեջանում հայ բնակչության ազատ բնակության անհնարինության մասին, Դատապարտում են Ադրբեջանի ռազմական ագրեսիան, որն իրականացվում է թուրքական իշխանությունների և օտարերկրյա վարձկանների աջակցությամբ, և կոչ է անում անհապաղ դուրս բերել Ադրբեջանի զինված ուժերը և նրանց կողմնակիցներին այն տարածքներից, որոնք գրավվել են 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում իրականացվող ռազմական գործողությունների արդյունքում: Կոչ են անում կառավարությանը պաշտպանել Մինսկի խմբի շրջանակներում բնակչության պաշտպանությանն ուղղված միջոցառումների անհապաղ իրականացումը՝ իր հովանու ներքո զսպման միջազգային ուժեր տեղակայելով, պահանջել միջազգային հետաքննություն անցկացնել Լեռնային Ղարաբաղում, մասնավորապես քաղաքացիական բնակչության դեմ և միջազգային իրավունքով արգելված զենքի կիրառման արդյունքում կատարված ռազմական հանցագործությունների վերաբերյալ և ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և օգտագործել այդ ճանաչումը որպես բանակցային գործիք՝ տևական խաղաղություն հաստատելու նպատակով»[39]: Երկու տարի անց, ֆրանսիական խորհրդարանի երկու պալատները կրկին անդրադարձել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը՝ արձագանքելով շարունակվող ռազմական ագրեսիային: 2022թ. նոյեմբերին ընդունված բանաձևերով, «Հաշվի առնելով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2005թ. սեպտեմբերի 16-ի 60/1 բանաձևը պաշտպանության պատասխանատվության մասին, Եվրամիության հովանու

[39] Sénat, Résolution N° 26 (2019-2020), Portant sur la nécessité de reconnaître la République du Haut-Karabagh, 25 novembre 2020, http://www.senat.fr/leg/tas20-026.pdf

ներքո անցկացվող խաղաղ բանակցությունների վրա Ռուսաստանի և Ուկրաինայի միջև հակամարտության հետևանքների ու Եվրամիության էներգետիկ ինքնավարության հետ կապված ռազմավարական խնդիրների ազդեցությունը, խստորեն դատապարտում են 2022 թվականի օգոստոսի սկզբին Հայաստանը Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտին կապող Լաչինի միջանցքում Ադրբեջանի կողմից իրականացված նոր ռազմական ագրեսիան և 2022 թվականի սեպտեմբերի 13-ին և 14-ին դրա կրկնվելը Հայաստանի Հանրապետության տարածքի հարավային և հարավ-արևելյան շրջանների նկատմամբ, Կոչ են անում կառավարությանը վճռականորեն հասնել նրան, որ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդը Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքում Ադրբեջանի ագրեսիայի մասին գործը հանձնի Միջազգային քրեական դատարան, այդ թվում՝ զանգվածային և ռազմական հանցագործությունների հետաքննության նպատակով; Կոչ են անում կառավարությանն իր եվրոպացի գործընկերների հետ քննարկել առավել վճռական և համարժեք պատասխան միջոցներ ձեռնարկելու հարցը՝ ներառյալ Ադրբեջանի ղեկավարության ակտիվների կալանքը և Ադրբեջանից գազի և նավթի ներկրման էմբարգոն, որպես պատիժ Ադրբեջանի կողմից իրականացվող ռազմական ագրեսիայի համար: Վերահաստատում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման և այդ ճանաչումը բանակցային գործիքի վերածելու անհրաժեշտությունը՝ տևական խաղաղություն հաստատելու նպատակով»:[40]

Սակայն թե Ֆրանսիայի, թե ԵՄ կառավարությունները ոչ միայն ականջալուր չեղան իրենց խորհրդարանների փաստարկումներին ու կոչերին, այլև «մոռացան» իրենց պնդումները, որ խնդիրը ռազմական լուծում չունի ու պետք է լուծվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում բանակցությունների վերսկսումով՝ հայտնի

[40] Sénat, Résolution N° 19 (2022-2023), Visant à appliquer des sanctions à l'encontre de l'Azerbaïdjan et exiger son retrait immédiat du territoire arménien, à faire respecter l'accord de cessez-le-feu du 9 novembre 2020, et favoriser toute initiative visant à établir une paix durable entre les deux pays, 15 novembre 2022, https://www.senat.fr/leg/ppr22-003.pdf

երեք սկզբունքների, այդ թվում՝ ինքնորոշման իրավունքի, և վեց տարրերի հիման վրա։ Դրա փոխարեն Եվրախորհրդի նախագահ Շառլ Միշելը փորձեց նախաձեռնել մեկ այլ բանակցային գործընթաց, որին ավելի ուշ միացավ Ֆրանսիայի նախագահ Մակրոնը։ Միջնորդների առաքելություն ստանձնած երկու ֆրանսիացիներին չի կաշկանդում այն փաստը, որ իրենք չունեն նման բարդ դերակատարության համար անհրաժեշտ փորձ ու հմտություններ, անգամ՝ հակամարտությունների կարգավորման լիազորություններ ունեցող միջազգային կազմակերպություններից որևէ մեկի՝ ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի հովանավորությունը։ Թեև փորձ է արվում որպես կարևոր ձեռքբերում ներկայացնել հոկտեմբերի 7-ի Պրահայի քառակողմ հանդիպման հայտարարությունը[41], սակայն ակնհայտ է, որ այն որևէ էական արդյունք չի արձանագրում։ Կարևոր ձեռքբերում է համարվում այն, որ հայտարարությամբ Հայաստանն ու Ադրբեջանը ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը, սակայն ակնհայտ է, որ դա ՄԱԿ անդամ բոլոր պետությունների ստանձնած հանձնառությունն է ՄԱԿ կանոնադրությունը վավերացնելիս և լրացուցիչ հաստատում չի պահանջում։ Երկրորդ «ձեռքբերումն» այն է համարվում, որ հայտարարությունն արձանագրում է՝ տարածաշրջան է այցելելու ԵՄ քաղաքացիական առաքելությունը։ Բայց Ադրբեջանը հայտարարել է, որ դրա հետ կառնչվի այնքանով, որքանով հարկ կհամարի։ Պատահական չէ, որ առաքելության մի քանի շաբաթվա ներկայությունը Հայաստան-Ադրբեջան սահմանամերձ տարածքում որևէ արդյունք չի տվել։ Պրահայի և դրան նախորդած մի քանի հանդիպումների նախաձեռնողները փորձել են Հայաստան-Ադրբեջան հարաբերություններն անջատել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացից և կարգավորել առանձին։ Հավանաբար հույս են ունեցել, որ կկարողանան թույլ չտալ, որ Մինսկի խմբի համանախագահների գործունեության

[41] Quadrilateral Prague meeting statement: Armenia, Azerbaijan recognize each other's territorial integrity, 07.10.2022, https://news.am/eng/news/723892.html

փաստացի դադարեցման պայմաններում հակամարտության կարգավորման նախաձեռնությունն ամբողջությամբ անցնի Ռուսաստանին: Սակայն, ինչպես միանգամայն արդարացիորեն նշում է Մարի Դյումուլենը, առանցքային հարցը Լեռնային Ղարաբաղի կարգավիճակն է, ինչպես և եղել է 30 տարի:[42] Առանց կարգավիճակի որոշման այլ խնդիրների լուծման փորձերը ոչ միայն անպտուղ են, այլև վտանգավոր, քանի որ ուշադրությունը շեղում են բուն հարցից ու, կամա թե ակամա, մետրոպոլիային ժամանակ են տալիս փորձելու միջազգային իրավունքի կոպիտ խախտումներով՝ ռազմական ագրեսիայով ու պատերազմական հանցագործություններով լուծել խնդիրը ինքնորոշվող ժողովրդին ոչնչացնելով կամ դուրս մղելով տարածքից: Զարմանալի է, որ այս ակնհայտ ճշմարտությունը, որը բազմիցս հաստատվել է բոլոր չլուծված ինքնորոշման հակամարտությունների դեպքում, չեն «նկատում» ոչ միայն Ֆրանսիայի և ԵՄ ներկայացուցիչներն, այլև տարածաշրջանում մի քանի հարյուրամյակի ներկայություն ունեցող Ռուսաստանը: Հավանաբար Ռուսաստանի գլխավորությամբ եռակողմ հայտարարությունները ԵՄ ղեկավարներին հավատացրել են, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջև այսպես կոչված «խաղաղության պայմանագիրը» իրական ուրվագծեր է ստանում, և որոշել են Ռուսաստանից խլել նախաձեռնությունը՝ ակնկալելով, որ այդ հարցում իրենց կարևոր դերակատարությունը վճռորոշ նշանակություն կունենա, երբ իրական հնարավորություն առաջանա թուրքմենական գազը Հարավային Կովկասով Եվրոպա տեղափոխելու համար: Սակայն ստորև ցույց կտրվի, որ Ռուսաստանի միջնորդությունն այնքան է հեռու խնդրի կարգավորումից, որքան «Հարավային գազային միջանցքն» է հեռու Եվրոպայի գազային կարիքներն առանց ռուսական գազի բավարարելու նպատակից:

Ռուսաստանի դիրքորոշումը: Ռուսաստանը նույնպես անդրադարձել է ինչպես 2020թ. ագրեսիային, այնպես էլ դրանից

[42] **Dumoulin M**., Russia's indecision: Armenia and Azerbaijan return to violence, 22.09.2022, https://ecfr.eu/article/russias-indecision-armenia-and-azerbaijan-return-to-violence/

հետո ծավալված իրադարձություններին: Մասնավորապես, Ռուսաստանի արտաքին հետախուզության ծառայության տնօրեն Ս. Նարիշկինը հայտարարել է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտի են տեղափոխվել Մերձավոր Արևելքում կռվող հազարավոր ծայրահեղականներ, մասնավորապես, «Ջաբհաթ ան-Նուսրի», «Ֆիրքաթ համզա», «Սուլթան Մուրադ» ահաբեկչական կազմակերպություններից:[43] Այդ կապակցությամբ նախագահ Պուտինն իր անհանգստությունն է հայտնել Թուրքիայի նախագահ Էրդողանին:[44] Ինչպես հայտնի է, Ռուսաստանի նախագահի ակտիվ ջանքերով է 2020թ. նոյեմբերի 9-ին դադարեցվել ագրեսիան և ստորագրվել եռակողմ հայտարարություն[45], որն այդ պահին ունեցավ բացառիկ նշանակություն՝ թույլ տվեց կանխել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության բնաջնջումը ռազմական ագրեսիայով: Սակայն նաև ակնհայտ է, որ այդ հայտարարությունն ունի մի շարք լուրջ թերություններ, որոնց հետևանքները դրսևորվեցին հետագայում: Դրանցից գլխավորն այն էր, որ դրանով սկիզբ դրվեց Մինսկի խմբի համանախագահության ձևաչափով հակամարտության կարգավորման գործընթացի խափանմանը. Ֆրանսիան ու Միացյալ Նահանգները մեկ և կես ամիս շարունակված ագրեսիայի ընթացքում որևէ ազդեցիկ քայլ չարեցին այն դադարեցնելու համար, իսկ Ռուսաստանը փորձեց կարգավորման գործընթացը միանձնյա կառավարել՝ դրա համար չունենալով ոչ անհրաժեշտ լծակներ, ոչ հակամարտությունների կարգավորման լիազորություններ ունեցող միջազգային կազմակերպությունից՝ ՄԱԿ-ից կամ ԵԱՀԿ-ից ստացած լիազորություն: Ռազմական ագրեսիայի դադարեցումից հետո թվում էր, որ Մինսկի խմբի համանախագահող երկրները, որոնք նաև ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական 5

[43] Нарышкин заявил о переброске тысяч террористов в Нагорный Карабах, https://ria.ru/20201006/naryshkin-1578477893.html, 06.10.2020

[44] Путин указал Эрдогану на присутствие сирийских боевиков в Нагорном Карабахе, https://regnum.ru/news/polit/3089977.html

[45] Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации, 9.11.2020, http://kremlin.ru/acts/news/64384

անդամներից երեքն են, գիտակցել են իրենց կրկնակի պատասխանատվությունը կատարվածի ծանր հետևանքների համար ու փորձում են շտկել աղետալի հետևանքները։ Ագրեսիայի դադարեցումից հետո համանախագահների հրապարակած երեք համատեղ հայտարարությունները[46] հետևողականորեն արձանագրում էին, որ հակամարտությունը կարգավորված չէ, կարգավորման գործընթացը պետք է շարունակել՝ վերականգնելով բանակցությունները Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով՝ Մադրիդյան սկզբունքների հիմքում դրված երեք սկզբունքների ու վեց տարրերի հիման վրա։ Սակայն այդ հայտարարությունները որևէ գործողության չվերածվեցին։ Գործնական հարթությունում իրադարձությունները շարունակվում էին ագրեսիայի ընթացքում հաստատված տրամաբանությամբ։ Ռուսաստանը շարունակում էր իր միանձնյա միջնորդությունը՝ չկարողանալով կամ Հարավային Կովկասում իր աշխարհաքաղաքական նպատակների իրագործման ակնկալիքով չցանկանալով դիմակայել Ադրբեջանի ագրեսիվ նկրտումներին, իսկ Ֆրանսիան ու Միացյալ Նահանգները սոսկ հետևում էին իրադարձությունների զարգացմանը՝ բավարարվելով երկու կողմերին ուղղված զսպվածություն ցուցաբերելու կոչերով։ Արդյունքում, Ադրբեջանը ոչ միայն իր զորքերը դուրս չբերեց Լեռնային Ղարաբաղի (խորհրդային շրջանում՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի) սահմաններից՝ շարունակելով Շուշի և Հադրութ քաղաքների, ինչպես նաև մի շարք հարակից գյուղերի օկուպացիան, այլև հրադադարի հայտարարության ընդունումից հետո դրան ավելացրեց Լեռնային Ղարաբաղի մի շարք այլ գյուղերի օկուպացիան, ռազմական ստորաբաժանումների ներխուժումը Հայաստանի Հանրապետության տարածք և 2022թ.

[46] Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, 3 December 2020, https://www.osce.org/minsk-group/472419
Statement of the OSCE Minsk Group Co-Chairs , https://www.osce.org/minsk-group/473649, 14 December 2020
Statement of the OSCE Minsk Group Co-Chairs , https://www.osce.org/minsk-group/483416, 13 April, 2021

սեպտեմբերին ռազմական գործողությունները Հայաստանի Հանրապետության տարածքում:

Թեև Ռուսաստանի միջնորդությամբ 2021 և 2022թթ. ընդունված երեք եռակողմ հայտարարությունները նպաստել են դրանց նախորդած լարվածությունները պարպելուն, սակայն ընդհանուր իրավիճակը կայունացնելու ներուժ չեն ունեցել ու իրավիճակը շարունակում է վատթարանալ:

Նոյեմբերի 9-ի հայտարարության լուրջ թերություններից է նաև այն, որ դրա այն դրույթները, որոնք վերաբերում են Ադրբեջանին, չեն կատարվում: Մասնավորապես, 1-ին կետում սահմանվում է, որ կողմերը կանգնում են իրենց զբաղեցրած դիրքերում, մինչդեռ ադրբեջանական զինված ուժերը ոչ միայն հայտարարության ստորագրումից հետո օկուպացրել են Լեռնային Ղարաբաղի մի շարք գյուղեր, այլև ներխուժել են Հայաստանի Հանրապետության տարածք ու խորացել մի քանի կիլոմետր: 8-րդ կետում արձանագրված է, որ կողմերը փոխանակում են ռազմագերիներին, պատանդներին և իրենց մոտ պահվող այլ անձանց, սակայն, եթե Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը հանձնել են բոլորին, ապա Ադրբեջանում դեռևս պահվում են մի քանի տասնյակ հայ գերիներ: 6-րդ կետի համաձայն Ադրբեջանը պետք է երաշխավորի Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և բեռների տեղափոխման անվտանգությունը Հայաստանից Արցախ և հակառակ ուղղություններով, մինչդեռ դեկտեմբերին որպես «բնապահպաններ» ներկայացող մի խումբ ադրբեջանցիներ փակել են արտաքին աշխարհի հետ կապող այդ միակ ճանապարհը՝ մարդասիրական աղետի իրական սպառնալիք ստեղծելով Լեռնային Ղարաբաղի 120000 բնակչության համար: Նոյեմբերի 9-ի հայտարարության ևս մեկ թերություն է խաղաղապահների կարգավիճակի թերի լինելը՝ ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի հովանու բացակայությունը, ինչպես նաև գործողությունների շրջանակի սահմանված չլինելը: Ակնհայտ է, որ նոյեմբերի 9-ի հայտարարությունը, թեև ունեցել է կարևոր նշանակություն ռազմական գործողությունների դադարեցման

համար, սպառել է իրեն՝ հակամարտության կարգավորման տեսակետից։ Մոսկվան ունի իրավիճակի իր բացատրությունը, որը հոկտեմբերի 27-ին «Վալդայ» ակումբի ֆորումի ընթացքում ներկայացրել է Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը։[47] Ըստ նրա, Հայաստանի ղեկավարությունը մերժեց մինչ 2018թ. ձևավորված կարգավորման սխեման՝ ամեն ինչ 0-ական կետից սկսելու ճանապարհով, ինչը հանգեցրել է ձևավորված իրավիճակին։ Խնդրի լուծումը ներկայացնելով որպես այսպես կոչված «խաղաղության պայմանագրի» կնքում ու Ադրբեջանի և Հայաստանի միջև սահմանային հարցի լիարժեք կարգավորում, Վ. Պուտինը նշել է, որ ի տարբերություն «վաշինգտոնյան» տարբերակի, որը նախատեսում է «Ադրբեջանի ինքնիշխանության ճանաչում ամբողջ Ղարաբաղի վրա», իրենց մոտեցումն այն է, որ «եթե հայ ժողովուրդը և հայկական ղեկավարությունը համարում է, որ Ղարաբաղն ունի իր առանձնահատկությունները, որ պետք է դա ինչ որ ձևով արձանագրել ապագա խաղաղության պայմանագրում, դա նույնպես հնարավոր է։ Մենք կպաշտպանենք հայ ժողովրդի ցանկացած ընտրություն»։ Այդ «առանձնահատկությունն» ավելի ուշ ներկայացրեց Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովը՝ որպես Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշման հարցի հետաձգում։[48] Միաժամանակ, նա Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով իրականացվող կարգավորման գործընթացի տապալման պատասխանատվությունը վերագրում է Վաշինգտոնին ու Փարիզին, որոնք «հատուկ ռազմական գործողությունը սկսվելուց հետո հայտարարել են, որ Ռուսաստանի հետ որևէ տեղ և որևէ ձևաչափով չեն համագործակցի»։ Միաժամանակ, ըստ նրա, քանի որ Հայաստանը և Ադրբեջանը ստորագրել են Պրահայի հայտարարությունը, որտեղ արձանագրել են, որ ցանկանում են

[47] Заседание Международного дискуссионного клуба «Валдай», Тема форума в 2022 году – «Мир после гегемонии: справедливость и безопасность для всех», http://kremlin.ru/events/president/news/69695

[48] Пресс-конференция Сергея Лаврова по теме европейской безопасности, 1 декабря 2022 года, https://www.mid.ru/ru/foreign_policy/news/1841407/

«խաղաղության պայմանագիր» պատրաստել ՄԱԿ կանոնադրության և 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա, ապա դա կանխորոշում է, թե ինչպես պետք է մոտենալ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին: Ըստ նրա, այդ հռչակագիրը ազդարարում է, որ կողմերը «հաստատում են սահմանների անխախտելիությունը այն սահմաններում, որոնք գոյություն ունեին Խորհրդային միության հանրապետությունների միջև, իսկ այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Ադրբեջանի մաս էր»: Փորձառու դիվանագետը թույլ է տվել մի քանի կոպիտ սխալ: Նախ, այդ հռչակագրում նման արձանագրում չկա:[49] Երկրորդ, այնտեղ հռչակվում է Անկախ պետությունների համագործակցության ստեղծումը, որի անդամ պետությունների միջև համագործակցությունը պետք է կառուցվի միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա, այդ թվում՝ այն երեք սկզբունքների (ինքնորոշման իրավունք, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունք և տարածքային ամբողջականության սկզբունք), որոնք 2007թ. Մինսկի խմբի համանախագահների առաջարկությամբ արձանագրվել են որպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմք ու այդպիսին են եղել մինչև 2022 թվականին համանախագահների համագործակցության խզումը: Ավելին, եթե անգամ այդ հռչակագիրը ինչ որ ձևակերպումներ պարունակեր, այն չէր կարող գերակայել ՄԱԿ կանոնադրության նկատմամբ, առավել ևս՝ Անկախ պետությունների համագործակցության մեջ չմտնող տարածքի առնչությամբ, քանի որ, երբ այդ հռչակագիրը ստորագրվում էր, Լեռնային Ղարաբաղում արդեն անցկացվել էր ինքնորոշման հանրաքվե և դրա հիման վրա ստեղծվել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Դժվար է ենթադրել, որ Ս. Լավրովին հիշողությունը դավաճանում է՝ թե միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների, թե Ալմա-Աթայի հռչակագրի, թե Լեռնային Ղարաբաղի խնդրին առնչվող փաստերի առնչությամբ: Շատ

[49] Алма-Атинская декларация, 21 декабря 1991 г., https://www.mid.ru/ru/foreign_policy/integracionnye-struktury-prostranstva-sng/1701727/?ysclid=lca8b2l3km815740085

ավելի հավանական է, որ Արևմուտք-Ռուսաստան աշխարհաքաղաքական մրցակցության լարվածությունը այնքան է մեծացել, որ բարդ հարցերում Մոսկվան ընտրում է իրավիճակային լուծում-ներ՝ չկորցնելու համար կողմերից ոչ մեկի վստահությունը։ Սակայն ակնհայտ է, որ նման իրավիճակը երկար շարունակվել չի կարող և Ռուսաստանը պետք է ի վերջո ընտրություն կատարի։ Եթե, իհարկե, մինչ այդ չսայթաքի մյուս համանախագահը՝ Միացյալ Նահանգները։

Միացյալ Նահանգների դիրքորոշումը։ Ինչպես Մինսկի խմբի մյուս համանախագահ երկրները, ԱՄՆ գործադիր և օրենսդիր իշխանությունները ևս բազմիցս անդրադարձել են 2020թ. ագրեսիային և Թուրքիայի մասնակցությանը դրան։ ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեոն Թուրքիային մեղադրել է Ադրբեջանին զինելու և իրավիճակը բորբոքելու մեջ։[50] Նա ևս ողջունել է նոյեմբերի 9-ին կրակի դադարեցումը, սակայն ավելացրել է, որ դա Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման միայն առաջին քայլն է, և կոչ է արել հնարավորինս շուտ վերականգնել համագործակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ՝ հակամարտության ամուր լուծման հասնելու համար Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքների՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականության և ժողովուրդներ հավասար իրավունքների ու ինքնորոշման իրավունքի հիման վրա։[51] Խորհրդարանական մակարդակով անդրադարձեր են եղել նաև պատերազմական հանցագործություններին։ Մասնավորապես, 2022թ. նոյեմբերի 16-ին ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի «Կովկասում ԱՄՆ քաղաքականության

[50]New Clashes in Nagorno-Karabakh; Pompeo Says Turkey Makes Situation Worse, https://www.usnews.com/news/world/articles/2020-10-16/warring-sides-fight-new-clashes-in-powder-keg-nagorno-karabakh?context=amp

[51] The United States Welcomes Cessation of Hostilities Between Armenia and Azerbaijan and Announces New Assistance to Respond to the Nagorno-Karabakh Humanitarian Emergency, November 17, 2020, https://2017-2021.state.gov/the-united-states-welcomes-cessation-of-hostilities-between-armenia-and-azerbaijan-and-announces-new-assistance-to-respond-to-the-nagorno-karabakh-humanitarian-emergency/index.html

գնահատում» քննարկման ժամանակ հանձնաժողովի նախագահ Բոբ Մենենդեսը հայտարարել է, որ 2020թ. ագրեսիայի ընթացքում Ադրբեջանի զինված ուժերը սպիտակ ֆոսֆոր պարունակող զինամթերք են կիրառել, որը մատակարարել է Ուկրաինան: Միաժամանակ, նա հիասթափություն է հայտնել ԱՄՆ Պետական դեպարտամենտից, որը երկու կողմերին զսպվածության կոչ էր անում, մինչդեռ հստակ էր, որ կա ագրեսոր, որին պետք է քննադատել, և այդ ագրեսորը Ադրբեջանն է:[52] 2020թ. նոյեմբերի 9-ին ռազմական ագրեսիայի դադարեցումից հետո՝ մինչև 2021թ. ապրիլ, Միացյալ Նահանգների ներկայացուցիչը Մինսկի խմբի մյուս համանախագահների հետ հակամարտության կարգավորման վերաբերյալ համամիտ է եղել, որ անհրաժեշտ է Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով բանակցությունները վերսկսել ու մյուս խնդիրները՝ այդ թվում՝ ԼՂ կարգավիճակի վերաբերյալ, Մադրիդյան սկզբունքների հիման վրա լուծել՝ տևական ու կայուն խաղաղություն հաստատելու նպատակով:[53]

Այսպիսով, համանախագահների արդյունավետ համագործակցությունը սկսել է խափանվել, տրանսֆորմացվել է հակամարտության ձևաչափն ու կարգավորման գործընթացը՝ դրանից դուրս են մղվել Լեռնային Ղարաբաղը, Մադրիդյան սկզբունքները և իրավիճակն ավելի ու ավելի է վատթարացել Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի համար: Դա կարող էր տեղի ունենալ հետևյալ երեք պատճառներից որևէ մեկով՝

1. 2018-2020թթ. հակամարտության կարգավորման գործընթացում Հայաստանի իշխանությունների անհեռատես մոտեցումների հետևանքով խափանվել էր Մինսկի խմբի գործունեությունը,

[52] Assessing U.S. Policy in the Caucasus, Senate of USA, November 16th, 2022, https://www.foreign.senate.gov/hearings/assessing-us-policy-in-the-caucasus

[53] Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, 3 December 2020, https://www.osce.org/minsk-group/472419
Statement of the OSCE Minsk Group Co-Chairs , https://www.osce.org/minsk-group/473649, 14 December 2020
Statement of the OSCE Minsk Group Co-Chairs , https://www.osce.org/minsk-group/483416, 13 April, 2021

ինչը 2020թ. ռազմական ագրեսիայի առիթ դարձավ, որի արդյունքում ռազմաքաղաքական առավելություն ստացած Ադրբեջանն այլևս չի ցանկանում վերադառնալ կարգավորման նախկին ձևաչափին, քանի որ դա ինքնորոշման իրավունքի հիման վրա ի վերջո հանգեցնելու է Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչմանը,

2. Ռուսաստանի նախաձեռնությամբ, որը 2020թ. ադրբեջանական ռազմական ագրեսիայի դադարեցման գլխավոր միջնորդն էր, ինչը կարող էր Մոսկվայի համար գայթակղիչ դարձնել այն գաղափարը, որ, միայնակ իրականացնելով միջնորդական առաքելությունը, կկարողանա ինչպես Ադրբեջանին, այնպես էլ Հայաստանին պահել իր ազդեցության շրջանակներում՝ Հարավային Կովկասի տարածաշրջանում լիարժեք աշխարհաքաղաքական վերահսկողություն իրականացնելու նպատակով,

3. Արևմուտքի նախաձեռնությամբ, քանի որ 2020թ. գործարկվել էր «Հարավային գազային միջանցքը» և Արևմուտքում՝ Ֆրանսիայում ու ԱՄՆ-ում, նոր հույսեր են առաջացել, որ դրա միջոցով հնարավոր կլինի նվազեցնել Եվրոպայի կախվածությունը ռուսական էներգակիրներից ու պետք է հանդուրժողականություն դրսևորել 2020թ. ագրեսիայով ռազմաքաղաքական գերակշռություն ստացած Ադրբեջանի նկատմամբ, որը «Հարավային գազային միջանցքով» տեղափոխվող գազի մատակարարն է:

Առաջին դեպքը չէր կարող կարգավորման գործընթացի արմատական փոփոխության պատճառ դառնալ, քանի որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գլխավոր դերակատարը Լեռնային Ղարաբաղն է, իսկ առանցքային խնդիրը, ինչպես նշում են անկախ փորձագետները, մասնավորապես, վերոհիշյալ Մ. Դյումուլենը, Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշումն է: Միջնորդական առաքելություն ունեցող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հնարավորություն ունեն թույլ չտալու կարգավորման գործընթացի անհիմն տրանսֆորմացիա: Ավելին, նրանք պարտավոր են իրենց լիազորած կազմակերպությանն առաջարկել կիրառել միջազգային իրավունքից բխող (այսինքն, Մադրիդյան սկզբունքների հիման վրա իրենց առաջարկած)

անհապաղ լուծում, ինչպես դա արվել է Կոսովոյի, Արևելյան Թիմորի, Հարավային Սուդանի դեպքերում, քանի որ 2020թ. ռազմական ագրեսիան, ինչպես ցույց կտրվի ստորև, վկայում է, որ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը գտնվում է ցեղասպանության իրական վտանգի ներքո։

Երկրորդ դեպքը բավական նման է իրական մոդելի, եթե հաշվի առնվի 2022թ. փետրվարին սկսված ռուսական «հատուկ ռազմական գործողությունը» և Արևմուտքի արձագանքները դրան, սակայն առաջանում են մի քանի հարցադրումներ, որոնց պատասխաններից է կախված, թե արդյոք իսկապե՞ս այդ դեպքն է հենց նման զարգացումների պատճառը։ Դրանցից գլխավորն այն է, թե արդյո՞ք Ռուսաստանն այդ ճանապարհով կարող է դառնալ ԼՂ հակամարտության միակ միջնորդը, և, եթե այո, ապա արդյոք այդ մեխանիզմը կգործի՞ որպես Հայաստանին ու Ադրբեջանին իր ազդեցության շրջանակներում պահելու միջոց։ Ադրբեջանի համար Մինսկի խմբի գործունեության դադարեցումը եղել է երկար տարիների նպատակ և Ռուսաստանի միակ միջնորդ դառնալը այդ առումով ձեռնտու է, թեև կա նաև ԵՄ-ի հետ հարաբերությունները պահպանելու խնդիրը՝ էներգետիկ ոլորտում ներդրումների հեռանկարները չկորցնելու նպատակով։ Վերջին գործոնի հետ կապված, հարկ է նշել, որ ԼՂ հակամարտության կարգավորման հարցում Շ. Միշելը և Է. Մակրոնը Ռուսաստանից միջնորդական առաքելությունը խլելու փորձեր անում են, սակայն վերը նշված մի շարք հանգամանքների պատճառով այդ նախաձեռնությունը հաջողության շատ փոքր հեռանկարներ ունի։ Իրական հնարավորություններ կարող են առաջանալ, եթե Ֆրանսիան և Միացյալ Նահանգները փորձեն վերակենդանացնել Մինսկի խմբի համանախագահության ձևաչափը, Ռուսաստանը խոչընդոտի դրան և կարգավորման գործընթացի խափանման աղետալի հետևանքներից խուսափելու հիմնավորմամբ Ֆրանսիան ու ԱՄՆ-ն այդ ձևաչափով իրական զարգացումներ ապահովեն՝ առանց Ռուսաստանի։ Իհարկե, այստեղ վտանգ կա՝ Ադրբեջանն ամեն կերպ փորձում է խափանել Մինսկի խմբի ձևաչափի վերագործարկումը՝

խուսափելու համար Մադրիդյան սկզբունքների կիրառումից: Անգամ ամերիկյան նոր համանախագահ նշանակելուց հետո փորձել է սպառնալ Միացյալ Նահանգներին:[54] Սակայն նման սպառնալիքներն ավելի շուտ վկայում են դրանք հնչեցնողների վախերի, այլ ոչ թե դրանք իրագործելու հնարավորություններ ունենալու մասին: Այս տարբերակներից որևէ մեկի իրականություն դառնալու հարցը հատկապես կախված է այն բանից, թե արդյոք Հայաստանն ու Ադրբեջանը կնախընտրեն աջակցել Արևմուտքի նախաձեռնությանը, թե միանշանակորեն կգնան Ռուսաստանի թելադրած ճանապարհով: Հնարավոր է, որ Ռուսաստանում իսկապես հավատում են այն կաղապարին, որը վաղուց տարածված է ռուսական քաղաքական ու մերձքաղաքական շրջանակներում՝ ո՞ւր պետք գնա Հայաստանը, եթե ոչ Ռուսաստան: Սակայն 2018 թվականին Հայաստանում իշխանության եկած ուժը մի քանի անգամ ցույց է տվել, որ այս կամ այն հարցում իր ընտրությունը կարող է բոլորովին էլ Ռուսաստանը չլինել: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա անգամ Մոսկվայի համար այնպիսի զգայուն հարցում, ինչպիսին Ուկրաինայի հետ հարաբերություններն են, Բաքուն կարող է ընտրել ոչ թե Մոսկվան, այլ Կիևը: Հետաքրքիր է, որ թեև ավանդաբար տիրապետող է այն կարծիքը, որ ԼՂ-ը ինքնուրույն դերակատարություն չունի և ամեն ինչ որոշում է Հայաստանի իշխանությունը, սակայն վերջին ամիսներին Ստեփանակերտում՝ ԼՂ մայրաքաղաքում տեղի ունեցած երկու բազմահազարանոց հանրահավաքները[55] և դրանում հնչած գաղափարները վկայում են, որ շատերի համար անսպասելի ինքնուրույն դերակատարության համոզիչ փաստարկներ կարող է ներկայացնել ԼՂ իշխանությունը, որի համար կողմնորոշիչ է լինելու կարգավիճակի հարցը: Այս

[54] Azerbaijani MFA demarche: Appointment of new OSCE Minsk Group co-chair may alienate US from regional processes, https://news.am/eng/news/717330.html

[55] Des milliers de manifestants au Haut-Karabakh contre le blocage d'un axe vital vers l'Arménie, 25.12.2022, https://www.lefigaro.fr/international/des-milliers-de-manifestants-au-haut-karabagh-contre-le-blocage-d-un-axe-vital-vers-l-armenie-20221225

ամենը վկայում է երկրորդ դեպքի կենսունակության մասին և այն առնվազն արժանի է ավելի մանրամասն քննարկման:

Ակնհայտ է, որ երրորդ դեպքը երկրորդի այլընտրանքն է: Առավել ևս, եթե հաշվի առնվեն Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցներն ու ռուսական էներգակիրներից հրաժարվելու եվրոպական ծրագրերը: Հետևաբար, ինչքան էլ դա զարմանալի թվա, եթե այդ տհաճ, բայց անհերքելի իրողությունն արժանանա ԵՄ պաշտոնյաների ուշադրությանը, ԼՂ հակամարտության կարգավորման հարցը ԱՄՆ-Ռուսաստան մրցակցությունում կստանա ավելի մեծ աշխարհաքաղաքական նշանակություն, քան ադրբեջանական խիստ սահմանափակ ու Եվրոպայի համար ոչինչ չորոշող գազի պաշարները: Այդ դեպքում հավանաբար ԱՄՆ-ում կհիշեն նախագահ Բայդենի խոսքերը, որոնք տեղ էին գտել 2021թ. Հայոց ցեղասպանության ճանաչման առիթով հղած ուղերձում. «Այսօր, երբ մենք սգում ենք կորստի համար, մեր հայացքը հառենք նաև ապագային՝ աշխարհին, որը մենք ցանկանում ենք կառուցել մեր երեխաների համար: Աշխարհ, որտեղ տեղ չկա խավարամտության և անհանդուրժողականության համար, որտեղ հարգվում են մարդու իրավունքները, իսկ մարդիկ կարող են ապրել արժանապատիվ և անվտանգ: Եկեք կրկին հաստատենք մեր ընդհանուր վճռականությունը՝ կանխելու համար ապագա վայրագություններն աշխարհի ցանկացած կետում: Եվ եկեք ձգտենք դարմանելուն ու հաշտեցմանը՝ աշխարհի բոլոր մարդկանց համար»[56]: Դժվար է աշխարհի որևէ կետում մատնանշել ավելի ակնհայտ ու աղետաբեր վայրագություններ, քան այն, ինչը տեղի է ունենում 2020թ. սեպտեմբերից սկսած Լեռնային Ղարաբաղում և Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը կարող է լինել այն փորձաքարը, որը ցույց կտա՝ արդյո՞ք ամերիկյան վարչակարգն ունի նման

[56] Statement by President Joe Biden on Armenian Remembrance Day, April 24 2021, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2021/04/24/statement-by-president-joe-biden-on-armenian-remembrance-day/

իրական վճռականություն, թե՞ նախագահ Բայդենի ուղերձը կմնա որպես գեղեցիկ գաղափար, որը կխամրի աշխարհաքաղաքական շահերի ազդեցության ներքո: Ընդ որում, ամերիկյան վարչակարգի արձագանքը կարտացոլի ոչ միայն վերաբերմունքը Լեռնային Ղարաբաղին սպառնացող ցեղասպանության իրական վտանգի նկատմամբ, այլև, թե արդյո՞ք լիբերալները կգնան Ջ. Այքնբերրիի մատնանշած ճանապարհով՝ փրկելով արժեքներն ու սկզբունքները. «Լիբերալները պետք է ընդունեն իրենց սխալներն ու ձախողումները: Ազատական միջազգային կարգի անունից Միացյալ Նահանգները շատ հաճախ էր միջամտում, շատ քիչ էր կարգավորում և անում շատ ավելի քիչ, քան խոստանում էր: Ճակատագրի հեգնանքով, ազատականությունից դժգոհություններն իմաստ ունեն միայն այն համակարգի շրջանակներում, որը ներառում է ***ինքնորոշումը,*** անձի իրավունքները, տնտեսական անվտանգությունն ու ***օրենքի գերակայությունը***, որոնք ազատական ինտերնացիոնալիզմի ամենաառանցքային գաղափարներն են:[57] Այդ պատճառով «Միացյալ Նահանգները պետք է գլխավորեն ազատական միջազգային կարգի հիմնական նախադրյալի վերականգնման՝ հասարակություններն իրենք իրենցից, մեկը մյուսից և արդիականության կոշտ ալեկոծություններից պաշտպանող միջազգային ինստիտուտների և նորմերի ձևավորման գործընթացը»[58]:

Կարգավորման հնարավորությունները աշխարհաքաղաքական նոր իրավիճակի պայմաններում. միջազգային իրավո՞ւնք, թե՞ ցեղասպանություն

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի մասին քննարկումների ժամանակ հաճախ մոռացվում է, որ այդ ամենը սկսվել է 1988թ., երբ ԽՍՀՄ ղեկավարության հայտարարած քաղաքական ռեֆորմներից ոգևորված Լեռնային

[57] **Ikenberry G. J.,** The Next Liberal Order: The Age of Contagion Demands More Internationalism, Not Less, *Foreign Affairs*, July/August 2020.
[58] Նույն տեղում

Ղարաբաղի ինքնավար մարզի հայ բնակչությունը (այդ ժամանակ՝ մարզի բնակչության մոտ 80 տակոսը, իսկ 1920-ականների սկզբին, երբ բոլշևիկների ապօրինի որոշմամբ մարզը հայտնվեց Ադրբեջանի կազմում՝ 95 տոկոսը), որոշեց իրացնել իր ինքնորոշման իրավունքը:[59] Ի պատասխան Ադրբեջանի կոմունիստ ղեկավարները կազմակերպեցին հայերի ջարդեր, էթնիկ զտումներ, որոնց արդյունքում ազգային պատկանելության պատճառով զոհվեցին այդ երկրում ապրող բազմաթիվ հայեր, փախստականներ դարձան հարյուր հազարավորներ:[60] Այդ ամենի փաստական հիմքերն արձանագրվեցին Ռուսաստանի դատարաններում, որտեղ դրանց կատարողները դատապարտվեցին երկարաժամկետ ազատազրկման: 90-ականների սկզբին Ադրբեջանը ԼՂԻՄ-ի դեմ սանձազերծեց լայնածավալ ռազմական ագրեսիա՝ ներգրավելով վարձկան ահաբեկիչների, որին զոհ գնացին տասնյակ հազարավոր մարդիկ, այդ թվում՝ քաղաքացիական, ավերվեցին Լեռնային Ղարաբաղի գրեթե ողջ ինֆրակառուցվածքը, ծիսական կառույցները:[61] Պատմությունը կրկնվում է այսօր: Ինչպես ցույց տրվեց վերևում, 2020թ. ադրբեջանաթուրքական լայնածավալ ագրեսիան՝ օտարերկրյա վարձկանների ու թուրքական օդուժի ներգրավումով, արգելված զինատեսակների կիրառումով, քաղաքացիական բնակչության ու շինությունների հրթիռակոծումով, ծիսական կառույցների ու պատմական հուշարձանների ավերումով,[62] ինչը արձանագրած

[59] **Torosyan T.** Conflict Resolution in the Framework of the International Law. Case of Nagorno- Karabakh. Yerevan, 2010.

[60] **Cox C. and J. Eibner,** Ethnic Cleansing in Progress: War in Nagorno-Karabakh (Zurich, London and Washington: Christian Solidarity Worldwide 1993)

[61] **Gor P. W.,** 'Tis Some Poor Fello's Skull. Post-Soviet Warfare in the Southern Caucasus (Lincoln: iUniverse 2008.

Cox C. and J. Eibner, Ethnic Cleansing in Progress: War in Nagorno-Karabakh (Zurich, London and Washington: Christian Solidarity Worldwide 1993)

[62] **Hakim Bishara**, Satellite Imagery Reveals Azerbaijan's Persistent Erasure of Armenian Heritage Sites, August 22, 2021, https://hyperallergic.com/663782/satellite-imagery-reveals-azerbaijans-persistent-erasure-of-armenian-heritage-sites/

Simon Maghakyan and Sarah Pickman, A Regime Conceals Its Erasure of Indigenous Armenian Culture, February 18, 2019,

մասնագիտական ու հասարակական կազմակերպությունների զեկույցներն ու բանաձևերը, լրատվամիջոցների հրապարակումները որակում են որպես ցեղասպանություն կամ ցեղասպանության փորձ։[63] Ադրբեջանը նախապատրաստում է հերթական փորձը՝ դեկտեմբերի սկզբից փակել է Լեռնային Ղարաբաղի բնակչությանն արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը՝ իբր բնապահպանական պահանջներով: Սա ցինիզմի բարձրագույն դրսևորում է՝ 120000 մարդկանց դատապարտել սովի, զրկել տեղաշարժվելու և դեղեր ու առողջապահական օգնություն ստանալու հնարավորություններից՝ իբր հանքավայրերում ինչ որ բնապահպանական խնդիրների դեմ բողոքելու նպատակով: Ռուս խաղաղապահները, որոնք չունեն միջազգային կարգավիճակ, և Ռուսաստանի ղեկավարությունը, որը փորձում է միայնակ իրականացնել միջնորդական առաքելությունը՝ սահմանափակվելով կոչերով[64], անզոր է այդ ահաբեկչական գործողությունը դադարեցնելու

---

https://hyperallergic.com/482353/a-regime-conceals-its-erasure-of-indigenous-armenian-culture/

Simon Maghakyan, Emboldened by Ukraine Crisis, Azerbaijan Escalates its War on Armenian Heritage Sites, February 4, 2022 https://hyperallergic.com/709512/azerbaijan-escalates-its-war-on-armenian-heritage-sites/

Yelena Ambartsumian, European Parliament "Strongly Condemns" Azerbaijan's Destruction of Armenian Heritage, March 29, 2022, https://hyperallergic.com/720511/european-parliament-strongly-condemns-azerbaijans-destruction-of-armenian-heritage/

[63] Lemkin Institute Statement on Self-Determination of Armenians in Artsakh (South Caucasus): There is No "Peace" or "Prosperity" through Genocide, 24.11.2022, https://www.lemkininstitute.com/statements-new-page/statement-on-self-determination-of-armenians-in-artsakh-(south-caucasus)%3A-there-is-no-peace-or-prosperity-through-genocide

Report: The Anatomy of Genocide – Karabakh's Forty-Four Day War, https://www.persecution.org/2021/01/21/report-anatomy-genocide-karabakhs-forty-four-day-war/

Armenian genocide 2.0? https://www.persecution.org/2021/05/15/armenian-genocide-2/

[64] МО РФ посоветовало МО Азербайджана не подвергать сомнению деятельность миротворческого контингента РФ, 25.11.2022, https://news.am/rus/news/732095html,

Брифинг официального представителя МИД России М.В.Захаровой, Москва, 8 декабря 2022 года, https://www.mid.ru/ru/foreign_policy/news/1842643/#28

հարցում: Անզոր է նաև ԵՄ քաղաքացիական առաքելությունը, որը իրական մարդասիրական աղետի պայմաններում ոչ թե փորձում է հնարավորություններ գտնել այդ հարցը լուծելու համար, այլ դիտորդական դերակատարություն է ստանձնել Հայաստան-Ադրբեջան սահմանին: ՄԱԿ Անվտանգության խորհուրդը սեպտեմ-բերից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում երկու նիստ է գումարել՝ նախ Հայաստանի Հանրապետության տարածքում ադրբեջանական զինուժի ռազմական գործողություններ իրականացնելու և 140 քառակուսի կիլոմետր օկուպացնելու, ապա՝ ադրբեջանցի «բնապահպանների» կողմից Լաչինի միջանցքի փակելու հարցե-րով:[65] Երկուսն էլ անպտուղ՝ որևէ փաստաթուղթ չի ընդունվել Անվտանգության խորհրդի որոշ մշտական անդամների ջանքերով:

Ինչպես ցույց տրվեց վերևում, աշխարհաքաղաքական նոր իրավիճակը, որի լարվածությունն իր կիզակետին հասավ 2022թ. փետրվարի վերջին, երբ Ռուսաստանը սկսեց «հատուկ ռազմական գործողությունը» Ուկրաինայի դեմ, նոր աղետալի հետևանքներ կարող է ունենալ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության համար:

ԵԱՀԿ Մինսկի խմբի բոլոր երեք համանախագահող երկրները միաժամանակ ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտա-կան անդամներ են: Նրանք պարտավոր են 2005թ. ՄԱԿ անդամ երկրների ընդունած «պաշտպանելու պատասխանատվության» սկզբունքի համաձայն Լեռնային Ղարաբաղի «բնակչությանը պաշտպանել ցեղասպանությունից, պատերազմական հանցագոր-ծություններից, էթնիկ զտումներից և մարդկության դեմ կատարվող այլ հանցագործություններից»[66]: Այդ պատասխանատվությունը

---

[65]https://www.lemonde.fr/international/article/2022/12/15/les-armeniens-du-haut-karabakh-victime-d-un-blocus_6154527_3210.html
Pierson E., Arménie : ces nébuleux «éco-activistes» qui bloquent le corridor de Latchine, 26.12.2022, https://www.lefigaro.fr/international/armenie-ces-nebuleux-eco-activistes-qui-bloquent-le-corridor-de-latchine-20221226

[66]
www.un.org/en/development/desa/population/migration/generalassembly/docs/globalcompact/A_RES_60_1.pdf

ենթադրում է կանխարգելման պատասխանատվություն, դրա անբավարար լինելու դեպքում՝ արձագանքման պատասխանատվություն՝ ընդհուպ մինչև ռազմական միջամտություն, ինչպես նաև վերականգնման պատասխանատվություն:

Առայժմ իրավիճակին համարժեք արձագանքներ ստացվում են մասնագիտական կազմակերպություններից.«Այդ հակամարտության հիմքում ընկած են երկու գործոններ, որոնք ընդհանուր են ցեղասպանության սցենարների համար. խմբի կամ խմբերի թուլացում ցեղասպանության արդյունքում և այն խմբի/խմբերի շարունակվող անպատժելիություն (և ցեղասպանության գաղափարախոսություն), որոնք հանցագործություններ են կատարել: Արևմտյան աշխարհը, և հատկապես ՆԱՏՕ-ն պետք է հասկանան, որ Արցախի «հանձնումը» կնշանակի հայերի ցեղասպանության հովանավորություն՝ հայերի բռնի տեղահանություն և հետապնդում, լայնորեն տարածված գազանաբարո ոճրագործություններ, մշակութային ժառանգության ոչնչացում և Կովկասի տարածաշրջանի ամենախոշոր մարդասիրական ճգնաժամ:

Ինքնորոշման հիմնարար իրավունքը չպետք է դառնա հերթական իրավական ֆիկցիա, այն պետք է հասկանալ որպես ամուր միջազգային խաղաղության և անվտանգության կարևորագույն տարր: Բացի այդ, միջազգային հանրության պատասխանատվությունը խմբի ինքնության պաշտպանության համար կարևորագույն նորմ է, որը պետք է այս դեպքում գործի, երբ աշխարհը եզակի հնարավորություն ունի կանխելու ցեղասպանությունը, քանի դեռ չեն սկսվել զանգվածային սպանությունները: Լեմկինի ինստիտուտը արդար ելք և կայուն խաղաղություն հաստատելու համար կոչ է անում ստեղծել անկախ միջազգային հանձնաժողով, որը կուսումնասիրի Արցախի հետ կապված խնդիրները: Չի կարելի թույլ տալ, որ Ադրբեջանը ուժ կիրառի հայկական տարածքների նկատմամբ ոտնձգությունների համար և միջազգային հանրությունը պետք է հստակ հասկացնի, որ եռանդով

կպաշտպանի հայերի կյանքը 1915 թվականի ցեղասպանությունը չվերսկսելու համար»:[67]

Քանի որ Հարավային Կովկասը դարձել է աշխարհաքաղաքական ամենասուր մրցակցության թատերաբեմերից մեկը, դա է պատճառը, որ Լեռնային Ղարաբաղը հայտնվել է ցեղասպանության սպառնալիքի ներքո: Սակայն, ինչպես ցույց են տվել Արևելյան Թիմորի, Հարավային Սուդանի, Կոսովոյի դեպքերը, երբ վերսկսվում են ռազմական գործողությունները և ցեղասպանության, էթնիկ զտումների, զանգվածային սպանությունների և ավերածությունների սպառնալիք է առաջանում, խնդիրը կարող է լուծվել ինքնորոշման իրավունքի պարտադրված, անհապաղ կիրառման (remedial secession) միջոցով: Հետևաբար Մինսկի խմբի համանախագահ երկրները պետք է հարգանքով վերաբերվեն 13 տարիների իրենց միջնորդական առաքելությանն ու միջազգային իրավունքի հիմնարար նորմերին, որոնց հիման վրա մշակվել էր բանակցային փաստաթուղթը (Մադրիդյան սկզբունքները), որի կիրառման նպատակով բանակցային գործընթացը շարունակելու վերաբերյալ երեք երկրների արտգործնախարարները հայտարարություն են հրապարակել 2020թ. դեկտեմբերի 3-ին Տիրանայում. «Համանախագահ երկրները կոչ են անում Հայաստանին և Ադրբեջանին օգտագործել կրակի ներկայիս դադարեցումը համանախագահների հովանու ներքո ամուր և կայուն խաղաղ համաձայնության բանակցությունների համար: Նրանք կրկին հաստատում են իրենց հետևողական և միասնական դիրքորոշումը՝ հօգուտ հակամարտության էության բոլոր մնացած հիմնական հարցերի վերաբերյալ բանակցային, համընդգրկուն և կայուն կարգավորման՝ հիմնական սկզբունքների ու տարրերի համաձայն, որոնք լավ հայտնի են ինչպես Հայաստանին, այնպես էլ

[67] Lemkin Institute Statement on Self-Determination of Armenians in Artsakh (South Caucasus): There is No “Peace” or “Prosperity” through Genocide, 24.11.2022, https://www.lemkininstitute.com/statements-new-page/statement-on-self-determination-of-armenians-in-artsakh-(south-caucasus)%3A-there-is-no-peace-or-prosperity-through-genocide

Ադրբեջանին»: Այս հայտարարությունը արձանագրում է, որ համանախագահող երկրները շարունակում են պնդել իրենց դիրքորոշումը կարգավորման գործընթացը պատերազմի պատճառով ընդհատված կետից՝ երեք հիմնարար սկզբունքների և վեց տարրերի հիման վրա (սկզբունքներից մեկը ինքնորոշման իրավունքն է, իսկ տարրերից մեկը՝ Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումը հանրաքվեի միջոցով, որի ցանկացած արդյունք բոլորը պետք է հարգեն) շարունակելու վերաբերյալ: Այդ մոտեցումը դեկտեմբերի 14-ին, ինչպես նաև 2021թ. ապրիլի 13-ին կրկնեցին նաև համանախագահները:

Իհարկե, 2020թ. ագրեսիայից հետո վեց տարրերից մեկը՝ Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների վերադարձը Ադրբեջանին, այլևս իրողություն է, իսկ երկու տարրերը կարիք ունեն խմբագրման՝ այդ պատերազմի արդյունքների հիման վրա: Ադրբեջանի վերահսկողության տակ են հայտնվել Լեռնային Ղարաբաղի Հադրութի, Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու և Շուշիի շրջանների տարածքներ, Շուշի և Հադրութ քաղաքները: Հետևաբար, ըստ հիմնարար սկզբունքների, այդ տարածքները Ադրբեջանը պետք է վերադարձնի Արցախին: Վերանայման ենթակա է նաև խաղաղապահներին վերաբերող տարրը, քանի որ նրանք արդեն տեղակայված են բաժանարար գծի ամբողջ երկայնքով և պետք է լուծել նրանց կարգավիճակի հարցը: Փաստորեն, կարգավորման այն սխեման, որն առաջարկում էին համանախագահները, պատերազմից հետո որոշ կետերով իրագործված է և Լեռնային Ղարաբաղին վերոհիշյալ տարածքների վերադարձից հետո պետք է անցնել երկրորդ փուլի իրագործմանը, որի առանցքային խնդիրը Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումն է: Քանի որ Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովը, ինչպես նաև ռուս համանախագահ Ի. Պոպովը ևս ստորագրել են հայտարարությունները, կարելի է վստահաբար պնդել, որ կարգավորման այդ ընթացքը լիովին բխում է նաև Մոսկվայի շահերից: Սակայն ակնհայտ է, որ այն կարող է իրականացվել, եթե Ֆրանսիան և

Միացյալ Նահանգները ներկայացնող համանախագահները պահպանեն իրենց անսասան դիրքորոշումը կարգավիճակի որոշման վերաբերյալ, որպեսզի Մոսկվան դիմակայի Անկարայի ու Բաքվի ճնշումներին: Թեև ակնհայտ է, որ Ռուսաստանն այդ ճանապարհի սկզբնական մասը կանցնի մեծ զգուշությամբ՝ իր դիրքերը չկորցնելու ակնկալիքով: Միացյալ Նահանգները, Ռուսաստանը, Ֆրանսիան միշտ ընդգծել են, որ Լեռնային Ղարաբաղի հարցում միշտ ունեցել են միասնական դիրքորոշում՝ մի կողմ թողնելով այլ հարցերում տարաձայնությունները:

Հանուն Լեռնային Ղարաբաղում ցեղասպանության կանխարգելման՝ արժե այս փուլում ևս հաստատել, որ երբ օրակարգում մարդկության դեմ կատարվող հանցագործությունների հարցն է, ազդեցիկ պետությունները կարող են վեր կանգնել կարևոր, բայց ժամանակավոր անգամ աշխարհաքաղաքական շահերից: Կարելի է չկասկածել, որ Ադրբեջանն ամեն ինչ կանի դա խոչընդոտելու համար՝ գործի կդրվեն շանտաժի ու գայթակղության տարբեր մեխանիզմներ: Եվրամիությանը կարող են փորձել գայթակղել կեղծ գաղափարով, որ իբր «Նախիջևանի միջանցքը» Եվրոպայի համար «Հարավային գազային միջանցքով» ճանապարհ կբացի դեպի Կասպյան ավազանի գազային անսահմանափակ պաշարներ (նույնքան կեղծ գաղափար, որքան տարիներ շարունակ զգալի ֆինանսական միջոցներ կլանած «Նաբուկկո» գազատարի հեռանկարները): Միացյալ Նահանգներին կսպառնան «Ադրբեջանի հետ ԱՄՆ-ի ռազմավարական կապերի ընդմիշտ կորստով»[68], Թուրքիայից ամերիկյան ռազմակայանների դուրսբերման պահանջով ու ՆԱՏՕ-ն լքելու սպառնալիքով: Ռուսաստանին կգայթակղեն ռազմական տեխնիկայի մեծածավալ գնումներով և ԵԱՏՄ-ին Ադրբեջանի միանալու հեռանկարով: Սակայն Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշման հետաձգումը խրախուսում է ցեղասպանության իրականացման ջանքերը: Ցեղասպանությունից խուսափելու միակ իրական

[68] https://haqqin.az/news/254058

ճանապարհը ինքնորոշման իրավունքի անհապաղ իրացումն է՝ ինքնորոշվող ժողովրդին օժտելով իրեն պաշտպանելու միջազգային իրավունքի համապատասխան գործիքակազմով։

Եզրակացություն

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի վայրիվերումների պատճառների ու հնարավոր զարգացումների վերլուծությունը ծայր աստիճան սրված աշխարհաքաղաքական դիմակայության համատեքստում ցույց է տալիս, որ

1. 2007-2008 թվականներից ակնհայտ դրսևորումներ ստացած ու մինչև 2020-ական թվականները շարունակվող Ռուսաստան-Արևմուտք աշխարհաքաղաքական մրցակցության շարունակական էսկալացիան հասել է իր գագաթնակետին ու աննախադեպ աղետալի հետևանքներ է ունենում ոչ միայն համաշխարհային զարգացումների վրա, ինչպիսին է, օրինակ, լիբերալ աշխարհի արմատական տրանսֆորմացիան, այլև տարածաշրջանային նշանակության, բայց խիստ զգայուն գործընթացների վրա, ինչպիսիք են հակամարտություններն ու դրանց կարգավորման միջնորդական առաքելությունները։ Դրա ամենավառ օրինակը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացն է, որը միջազգային իրավունքի արդյունավետ կիրառման օրինակելի դեպքից արագորեն վերածվեց այդ նույն իրավունքի կոպտագույն ոտնահարումների աղետալի դեպքի։

2.Աղետի առաջին ալիքը վրա հասավ 2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին, երբ կոպտորեն խախտելով միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները, որոնցից երեքը 2009 թվականից դարձել էին կարգավորման գործընթացի հիմք, ադրբեջանական զինված ուժերը՝ թուրքական օդուժի և Սիրիայից բերված հազարավոր վարձկան ահաբեկիչների օժանդակությամբ, կիրառելով արգելված զինատեսակներ, լայնածավալ ագրեսիա իրականացրեցին Լեռնային Ղարաբաղի նկատմամբ։ Թեև պատերազմի ընթացքում և դրա դադարեցումից հետո մի շարք մասնա-

գիտական ու հասարակական կազմակերպությունների զեկույցներ ու բանաձևեր, լրատվամիջոցների հրապարակումներ բազմիցս հաստատել են այդ պատերազմի ընթացքում թույլ տրված ռազմական հանցագործությունների փաստերը, իսկ Մինսկի խմբի համանախագահները, ինչպես նաև այդ երկրների արտաքին գործերի նախարարները հայտարարել են, որ հակամարտությունը ռազմական ուժի միջոցով լուծում ունենալ չի կարող, պետք է վերականգնվեն բանակցությունները Մինսկի խմբի ձևաչափով ու կարգավորումը պետք է իրականացվի Մադրիդյան սկզբունքների հիման վրա, սակայն աշխարհաքաղաքական բախումները պառակտել են այդ ձևաչափը՝ հնարավոր դարձնելով նոր աղետալի զարգացումներ։

3. Նման զարգացումների հավանականությունը մեծացնում է նաև այն հանգամանքը, որ Մինսկի խմբի համանախագահող երկրները, որոնք միաժամանակ ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամներ են, իրենց դիմակայությունը տեղափոխել են Անվտանգության խորհուրդ, որտեղ դրա պատճառով որևէ փաստաթուղթ չի ընդունվել Հայաստանի տարածքի նկատմամբ 2022թ. ադրբեջանական ագրեսիայի կապակցությամբ, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղն արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը, ադրբեջանցիների շրջափակման կապակցությամբ հրավիրված նիստերի ժամանակ։ Փաստորեն, նրանք ձախողում են իրենց առաքելությունը՝ թե որպես միջնորդներ, թե որպես ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամներ։ Ռուսաստանի, Միացյալ Նահանգների ու Ֆրանսիայի բարդ հարաբերությունները կամ նման իրական հարաբերությունների բացակայությունը հանգեցրել է հակամարտության բուն խնդրի աղճատմանն ու փակուղային իրավիճակի ձևավորմանը։ Ռուսաստանը փորձում է այլափոխել հակամարտության բնույթը՝ այն տեղափոխելով Հայաստան-Ադրբեջան սահմանային վեճի հարթություն, հասնել այսպես կոչված «խաղաղության պայմանագրի» ստորագրմանը, հետաձգելով հակամարտության բուն խնդրի՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշումը, Ֆրանսիան (ԵՄ-ն)

փորձում է այդ նախաձեռնությունը խլել Ռուսաստանից, իսկ ԱՄՆ-ն անդրկուլիսային գործընթացով փորձում է առաջ մղել հակամարտության բնույթի այլափոխման սեփական տարբերակը: Դժվար է հավատալ, որ այս ազդեցիկ պետությունների ներկայացուցիչները չեն ընկալում, որ դա չի կարող որևէ կարգավորում ապահովել, այլ նշանակում է ռազմական ագրեսիայի ու ցեղասպանության խրախուսում:

4.Թեև Լեռնային Ղարաբաղում տեղակայված են ռուս խաղաղապահներ, սակայն նրանք չունեն հակամարտությունների կարգավորման լիազորություն ունեցող որևէ միջազգային կազմակերպության աջակցություն, հստակ չէ նրանց կարգավիճակն ու լիազորությունների շրջանակը, ինչն այդ տեղակայումը դարձնում է անարդյունավետ, որի վկայությունն է Լաչինի միջանցքով Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև անխափան հաղորդակցության ապահովման անկարողությունը:

5. Թեև 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ՝ Հայաստան-Ռուսաստան-Ադրբեջան հայտարարությունն ունեցել է կարևոր նշանակություն՝ ռազմական ագրեսիայի դադարեցման առումով, սակայն ինչպես այդ փաստաթղթի կարգավիճակը, այնպես էլ դրա դրույթները բավարար չեն հակամարտության կարգավորման և կայուն խաղաղության հաստատման ու պահպանման համար: Այն չի կարող նաև կանխել աղետալի զարգացումները, որոնք ավելի ու ավելի իրական ու վտանգավոր են դառնում:

6. Այդ զարգացումները կանխելու, հակամարտության կարգավորման և կայուն խաղաղության հաստատման համար միջազգային հանրությունը պետք է ընտրություն կատարի ցեղասպանության խրախուսման ու միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկի՝ ինքնորոշման իրավունքի կիրառման միջև՝ ինքնորոշվող ժողովրդին ընձեռելով ցեղասպանությունից պաշտպանվելու միջազգային իրավունքի ամբողջական գործիքակազմ:

The Impact of New World Order Formation on the Settlement of Nagorno-Karabakh Conflict: Self-Determination or Genocide?

TIGRAN TOROSYAN
Brusov State University

Geopolitical transformations have radical effects in many spheres of public life. Its most prominent manifestations are observed in ethno-political conflicts and their settlement processes, particularly when they are accompanied by serious regional rearrangements. Due to the 2018 change of power in Armenia, the normally developing process of Nagorno-Karabakh conflict settlement within the framework of the main principles of international law ended up in sharp upheavals, succumbing to the logic of the sharply heated West-Russia geopolitical confrontation. The formation of antagonistic relations between the co-chairs of the Minsk Group undermined their mediation efforts, which leaves two options for the resolution of the conflict in the conditions of the effects of the Azerbaijani-Turkish aggression of 2020, the continuous aggressive actions of Azerbaijan, as well as the provocative behavior of Turkey: the realization of the right to self-determination with the support of international community or the genocide of the people of Nagorno-Karabakh.